Ազգ
Azg
20 ՅՈՒԼԻՍ 2013 ՇԱԲԱԹ 124(5207)
ISSN: 1829-1651

# «2,5-3 տոկոսից ավելի տնտեսական աճը չափազանց գովելի է Հայաստանի համար»

*Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) նախագահ Սումա Չակրաբարտին անդրադարձավ Հայաստանի տնտեսական ցուցանիշներին*

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԶԵԲ նախագահ **Սումա Չակրաբարտին** երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսի ժամանակ, խոսելով Հայաստանի համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) այս տարվա կանխատեսումների եւ ցուցանիշների մասին, նշեց, որ հաշվի առնելով գլոբալ տնտեսական վիճակը, 2,5-3 տոկոս տնտեսական աճ ապահովելը Հայաստանի համար չափազանց գովելի է: Նրա հավաստմամբ, այս ցուցանիշով Հայաստանի հետ համադրելի երկրները զգալիորեն հետ են մնում: Ըստ ՎԶԵԲ նախագահի, Հայաստանի նախագահի եւ կառավարության կողմից 6-7 տոկոս տնտեսական աճի պահանջ դնելը հավակնոտ է, ինչը պետք է ձգտել իրականացնել: Այդուհանդերձ, Եվրոբանկի կանխատեսումներով, այս տարի Հայաստանի տնտեսական աճը կկազմի 5 տոկոս:



Այս կանխատեսումը կատարվել է մայիսին, առանց հաշվի առնելու գազի եւ էլեկտրաէներգիայի սակագների բարձրացումը: Նոր կանխատեսում կարվի հոկտեմբերին:

ՎԶԵԲ-ի գնահատմամբ, այս տարվա առաջին 3 ամիսներին Հայաստանը լավ ցուցանիշներ է ցույց տվել, իսկ 2-րդ եռամսյակին էներգակիրների գնի բարձրացումը լուրջ հարված հասցրեց այդ աճին: Սումա Չակրաբարտին նաեւ նշեց, որ բանկի հետ համագործակցող բոլոր երկրներում տնտեսական վիճակը ավելի վատ է, եւ մեկ երկրում՝ Ուկրաինայում այս տարվա համար իրենք տնտեսական անկում են կանխատեսել:

*Տես էջ 2*

## ՎԶԵԲ տարեկան ժողովը Բաքվում չի լինելու

**Պատասխանելով այն հարցին, թե ճի՞շտ է ադրբեջանական լրատվամիջոցների այն տեղեկատվությունը, որ Սումա Չակրաբարտին համաձայնվել է ՎԶԵԲ տարեկան ժողովը 2017-ին Բաքվում անցկացնել, ՎԶԵԲ նախագահը ուղղակիորեն պատասխանեց. «Ոչ»: Նրա տեղեկացմամբ, ոչ մի որոշում տարեկան ժողով անցկացնելու մասին, բացի հաջորդ տարվա ժողովից, որը պետք է տեղի ունենա Վարշավայում, չի ընդունվել: Եղել են առաջարկներ տարբեր երկրներից, որոնց վերաբերյալ որոշումը կընդունվի հետագայում: Ադրբեջանական լրատվամիջոցների տեղեկությունների մասին էլ Սումա Չակրաբարտին ասաց, որ «մամուլի որոշ հրապարակումներ կարող են շատ հուզիչ լինել»:**

# Վքարը վքար է՝ Պողոլսկում լինի, թե Գետաբեկում

Հիշո՞ւմ եք վատ ուսանողի եւ լվի անեկդոտը: Ադրբեջանական քարոզչությունը վկայում է, որ դա «հավերժական» է: Day.az-ը, անդրադառնալով Պողոլսկի ողբերգությանը, մի «օրիգինալ» դիտարկում է արել. «Եթե հայերը զինադադարի հաստատումից հետո մասնակցեին Բաքվում «դարի համաձայնագրի» կնքմանը, ապա, ամենայն հավանականությամբ, նավթամուղը եւ գազատարը կանցնեին նրանց տարածքով, կգործեր Կարս-Գյումրի երկաթուղին, եւ Հրաչյա Հարությունյանն իր ԿամԱԶ-ով բեռներ կտեղափոխեր հայկական լեռնահանքարդյունաբերական շատ ձեռնարկություններից մեկում»:

Հարեւան երկրում, ինչպես տեսնում ենք, նույնիսկ մարդկային ողբերգության մեջ դարձյալ իրենց «լուն» են փնտրում: Բայց, ինչպես միշտ, զարնվում են նույն «փոցխին»: Բաքվի իշխանահաճ լրատվամիջոցի հեղինակը երեւի դեռ չէր էլ հասցրել դեմքը մաքրել քրտինքից, երբ այլ աղբյուրներ ծանուցեցին, որ Շամքոր-Գետաբեկ մայրուղու 4-րդ կիլոմետրի վրա «զինվորականներ տեղափոխող «ՊԱԶ» ավտոբուսը բախվել է Toyota Land Cruiser մակնիշի մեքենայի եւ շրջվել»: Արդյունքում մեկ զինվորական տեղում մահացել է, յոթը՝ «ստացել մարմնական ծանր վնասվածքներ եւ տեղափոխվել Շամքորի զինվորական հոսպիտալ»:

Ադրբեջանական քարոզչամեքենային չպատասխանե՞նք նույն «մանրադրամով» եւ չասե՞նք, որ եթե պաշտոնական Բաքուն հրաժարվեր «երկրորդ հաղթական պատերազմ» մղելու խելացնոր գաղափարից, եթե խաղաղ համաձայնության գար եւ ճանաչեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը, եւ տարածաշրջանում հաստատվեր խաղաղություն, ապա հարկ չէր լինի, որպեսզի Հայաստանին սահմանակից Գետաբեկի շրջանում զորքեր պահեր, զինվորականներով «ՊԱԶ»-ը Շամքորից չէր ուղեւորվի, չէր հանդիպի Toyota Land Gruiser-ին, բախում չէր լինի, ութ ադրբեջանցի երիտասարդ չէր տուժի:

Կամ՝ Բաքուն ի՞նչ երաշխիք ունի, որ Ռուսաստանում օրվա հաց վաստակող երկու միլիոնից ավելի ադրբեջանցիներից մեկը վաղը չի հայտնվելու Հրաչյա Հարությունյանից էլ վատ վիճակում: Կյանքը որեւէ քարոզչության չի տրվում. մեքենան վքարի է ենթարկվում եւ Պողոլսկում, եւ Գետաբեկում, եւ ամենուր: Իսկ ամեն մի ժողովուրդ եւ պետություն կարողանում է ընտրություն կատարել «ձրի պանրի», թակարդի եւ իր կենսական շահերի միջեւ:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# Ոստիկանությունում ՎՊ-ից ուղարկված փաստաթղթերից 6-ի վերաբերյալ նյութեր են նախապատրաստվում

Ըստ գլխավոր դատախազության հաղորդագրության՝ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում շարունակվում է Հայաստանի Վերահսկիչ պալատի՝ 2012թ. տարեկան հաշվետվության ուսումնասիրությունը:

Առայժմ ուսումնասիրության արդյունքում 6 նյութ ուղարկվել է ոստիկանության քննչական գլխավոր վարչություն՝ օրենքով սահմանված կարգով ընթացք տալու համար: Հիշեցնենք, թե որ նյութերն են ուղարկված եղել դատախազություն. Հայաստանին տրամադրված օտարերկրյա պետությունների եւ միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային, դրամաշնորհային, ինչպես նաեւ պետական բյուջեի միջոցների հաշվին «Կրթական ծրագրերի կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ'-պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ նյութերը. կրթության եւ գիտության նախարարությունում «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթության եւ ուսուցման (ՄԿՈՒ) բարեփոխումներ» ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատությունների հիմնանորոգման, գույքի եւ սարքավորումների ձեռք բերման, հանրակրթական ուսուցման (Աշտարակի, Վաղարշապատի թիվ 10, Մասիսի թիվ 5, Սեւանի Խ.Աբովյանի, Վանաձորի թիվ 17, Գյումրու թիվ 42, թիվ 45, Հրազդանի թիվ 13, Եղեգնաձորի եւ Դիլիջանի ավագ դպրոցներ), համակարգչային եւ ինտերնետային կապի ծառայություններ ծրագրերի ուղղությամբ պետբյուջեից հատկացված միջոցների օգտագործման եւ բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաեւ պետական սեփականության կառավարման եւ օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ նյութերը.

*Տես էջ 2*

# Նորմալ ու աննորմալ բաների եւ ուղեվարձի մասին

Տրանսպորտի գնի բարձրացման հետ կապված այս օրերի իրարանցումը մեզանում անհասկանալի է, այն պարզ պատճառով, որ տրանսպորտի գինն իրականում չի բարձրացել, միշտ է բարձր եղել: Դատենք միասին եւ տրամաբանորեն. եթե 150 դրամ սակագինը համարվում է թանկ եւ կարող է առաջացնել հասարակական ընդվզում, ապա 100 դրամ սակագինը եւս պետք է համարվեր թանկ եւ պետք է առաջացներ հասարական ընդվզում, ինչը չառաջացրեց: Ուրեմն 150 դրամ սակագինն էլ չի առաջացնի:

Հետեւաբար՝ խնդիրը ոչ այնքան տրանսպորտի՝ առանց այն էլ ոչ հեշտ տրվող սակագնի բարձրացումն է, որքան տեխնիկական է՝ մի քանի մասի բաժանված: Օրինակ՝ եթե մեկը միրգ-բանջարեղենի շուկայում ելակ է վաճառում, դիցուք կիլոգրամը՝ 300 դրամ, եթե ցանկանում է ավելացնել իր ապրանքի գինը, օրինակ՝ հասցնելով կիլոգրամը 350 դրամի, պետք է կամ ելակի որակը բարձրացնի, կամ էլ ներմուծի ինչ-որ ծառայություններ, որոնք մինչ այդ չկային: Այսինքն՝ ելակը թանկանում է, բայց փաթեթավորվում է գեղեցիկ տոպրակի մեջ, որը մտնում է ելակի գնի մեջ: Մինչդեռ տրանսպորտի գինը բարձրանում է, բայց տրանսպորտը չի փոխվում. էլի նույն «Գազել»-ներն են լինելու, էլի նույն չվացուցակներով, էլի նույն ծանրաբեռնված կանգառները, որոնք նույն ծանրաբեռնվածությամբ տեղափոխվելու են երթուղայիններ: Բայց այսօրվանից դրա համար վճարելու ենք ոչ թե 100, այլ՝ 150 դրամ: Ի դեպ, Կենտրոնական բանկը կարող է եւ 150-դրամանոց մտցնել շրջանառության մեջ, քանի որ երթուղայինի վարորդ-ուղեւոր դրամաշրջանառությունն այդպես ավելի պրակտիկ ու արագ կդառնա...

Քաղաքապետարանը տրանսպորտի գնի թանկացումը չհիմնավորեց գազի սակագնի թանկացմամբ, այլ՝ ոլորտում տարիների ընթացքում առաջացած ու իրենց լուծումները պահանջող խնդիրները լուծելու անհրաժեշտությամբ: Այլ կերպ ասած՝ տրանսպորտը թանկանում է, որովհետեւ ոլորտը կարիք ունի արդիականացման: Ինչպես՝ մետրոն, օրինակ: Հիշում ենք, 2011-ին՝ երկու տարի առաջ, մետրոյի սակագինը թանկացավ, քանի որ մետրոպոլիտենը արդիականացման կարիք ուներ: Պետք է ասենք, մետրոպոլիտենը շարունակում է արդիականացման կարիք զգալ, կան կայարաններ, որտեղ շարժասանդուղքները արդեն տեւական ժամանակ անսարք վիճակում են կամ միշտ վերանորոգման մեջ: Մետրոն եթե արդիականանում է, ապա շատ դանդաղ, հետեւաբար, տրանսպորտը եւս՝ իր ավելացված սակագնով, շատ դանդաղ է արդիականանալու, եթե, իհարկե, արդիականանա:

Ուրեմն մեր խնդիրը ոչ թե տրանսպորտի սակագնի բարձրացումն է, այլ տրանսպորտի ոլորտի արդիականացումը: Եթե տրանսպորտի գինը բարձրանում է, որպեսզի տրանսպորտի ոլորտն արդիականանա, դա նորմալ է, բայց երբ ոլորտն այդպես էլ չի արդիականանում, դա նորմալ չէ:

Վերջին տասը տարում տրանսպորտի անսասան գինը պետք է բարձրանար եւ բարձրացավ, պարզապես մեր երկրում մեր քաղաքացիները այնքան չեն վստահում, որ նորմալ վերաբերվեն այս բավականին նորմալ երեւույթին: Եվ սա է ամենակարեւոր խնդիրը:

ՀՈՎԻԿ ԱՖՅԱՆ

# Զինդատախազությունն ու Ոստիկանությունը գործել են հօգուտ Լիսկայի

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գնդապետ Արտակ Բուդաղյանի փաստաբան Հայկ Ալումյանը հունիսի 1-ին Սյունիքի նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի (Լիսկա) առանձնատան մոտակայքում տեղի ունեցած դեպքի առիթով հարուցված քրեական գործի նախաքննությանը 5 բալանոց համակարգով 2 է գնահատում: Գործը հարուցելուց հետո պաշտոնատար անձանց կողմից արված հայտարարություններում փաստաբանը տեսնում է միակողմանի մոտեցումներ, որոնք հօգուտ Խաչատրյանների են, ընդդեմ Բուդաղյանների:



«Նախաքննությունն ընթանում է զինդատախազ Գեւորգ Կոստանյանի կողմից նախանշված ճանապարհով: Երբ պարոն Կոստանյանը դեռ տեղեկություններ չուներ եւ չէր կարող իմանալ գործի մանրամասները, ինքն արդեն հեռու գնացող հայտարարություններ էր արել, նախանշել էր, փարոսի նման դրել էր ուղենիշ, ուր պիտի գնա նախաքննությունը: Ես հիմա տեսնում եմ, որ նախաքննությունը գնում է ճիշտ այդ ճանապարհով: Եթե ինչ-որ փաստեր այսօր նախաքննական մարմինը փորձում է հիմնավորել ստացված փորձագիտական եզրակացություններով, եւ այլն, շատ լավ: Եթե այդ փորձագետների եզրակացությունները հիմա են ստացվել, ապա ինչպե՞ս ստացվեց, որ պարոն Կոստանյանը հունիսի 6-ին արդեն հայտարարություններ էր անում, որոնց հավաստիությունը դեռ պիտի պարզվեր փորձաքննությունից հետո:

*Տես էջ 3*

## Ընթացիկ

# Վճարովի՞, թե՞ անվճար ծննդօգնություն

Ծննդօգնության եւ երեխաների առողջության պետական հավաստագրերի ներդրումը, որը մեր երկրում մեկնարկեց մայիսի մեկից, տեղիք տվեց իրարամերժ կարծիքների: Մի կողմից քաղաքացիները բողոքում են, որ որոշումը սահմանափակում է հղի կանանց իրավունքն ազատ ընտրելու, թե որ՞ հիվանդանոցում ծննդաբերեն պետպատվերով՝ մայրաքաղաքի՞, թե՞ մարզային, իսկ մյուս կողմից առողջապահության նախարարությունն արդարացնում է որոշումը բացատրությամբ, որ ծննդօգնության համար մարզերին տրամադրվող պետական ֆինանսական միջոցներն այժմ մնում են հենց մարզային հիվանդանոցներում, ինչը կօգնի բարելավելու տնօրենի, մայրաքաղաք գալիս են ավելի շատ հեղինակության համար (որպեսզի ասեն՝ Երեւանում են ծննդաբերել):

Թեեւ Արարատի հիվանդանոցը, ներառյալ մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքը, ապահոված են մասնագիտական անձնակազմով ու սարքավորումներով, բայց լինում են դեպքեր, որ այստեղից էլ դեպի Երեւանի երրորդ մակարդակի ծննդօգնության հիմնարկներ ուղեգրումը լինում է անխուսափելի:

«Արարատ» բուժկենտրոնի տնօրեն **Արայիկ Սարդարյանը** բացատրում է, որ ծննդօգնության համար Երեւան ուղեգրում են, երբ կարիք է լինում ավելի բարձր որակավորմամբ նեղ մասնագիտական օգնության: «Արարատ» բուժկենտրոնը համարվում է երկրորդ մակարդակի հիվանդանոց եւ սպասարկում է շուրջ 40 հազար բնակչության: Տնօրենը նշում է՝ այսօրվա դրությամբ չնայած ունեն բժշկական լավ անձնակազմ, բայց մի քանի մասնագետների կարիք դեռեւս ունեն՝ հոգեբույժի, օնկոլոգի ու մի նեոնատոլոգի:

Հավաստագրի ներդրման վերաբերյալ հրամանը շատ բան չի փոխել նաեւ Վայքի հիվանդանոցում, սակայն ոչ այն պատճառով, որ հիվանդանոցում գերազանց պայմաններ են, ու ներսում կա անհրաժեշտ ամեն ինչ, այլ այն պատճառով, որ Վայքից Երեւան հասնելը նախ հեռավորության առումով դժվար է, երկրորդն էլ՝ բուժանձնակազմի հոգատար ու ջերմ վերաբերմունքը հղիներին դրդում է ծննդաբերելու հենց Վայքի հիվանդանոցում, որը դեռեւս առաջին մակարդակի է:

«Վայքի բուժմիավորումը» սպասարկում է 15 հազար բնակչի, ու տարեկան ընդունում մոտավորապես 265 ծնունդ, օրինակ, 2012-ին ունեցել են 220 ծնունդ: Մայիսի մեկի հրամանից հետո ծնունդների ամսական թիվն այստեղ գրեթե անփոփոխ է մնացել:

«Վայքի բուժմիավորման» մանկաբարձագինեկոլոգիական բաժանմունքի վարիչ **Ռուզաննա Վարդանյանը** նշում է՝ նախկինում եւ հիմա էլ Վայքից Երեւան ծննդօգնության համար գալիս են միայն ուղեգրումով: Ռուզաննա Վարդանյանը, սակայն, ընդգծում է մեկ այլ հանգամանք, որն օրակարգային է ոչ միայն Վայքում՝ ավելացել են տարբեր պաթոլոգիաներով հղի կանանց թիվն ու կեսարյան հատումների քանակը: Միայն 2012 թվին Վայքի հիվանդանոցում եղել է կեսարյան հատումով 45 ծննդաբերություն: Կեսարյան հատումների ավելացումը, ըստ մասնագետի, պայմանավորված է նաեւ կեսարյան հատումների ցուցումների ընդլայնմամբ:

Վերադառնալով հիվանդանոցի պայմանների թեմային՝ Ռուզաննա Վարդանյանն իրենց բաժանմունքի մասով հավելեց, որ անհրաժեշտ մասնագետներով ապահոված են, սակայն սարքավորումների կարիք ունեն՝ այն էլ շատ:

Ծննդօգնության հավաստագրի ներդրման թեմային կանդրադառնանք «**Ազգի**» նաեւ հաջորդ համարում:

մարզերի ծննդօգնության հիմնարկների պայմանները եւ արժանավայել աշխատավարձ տալու մարզերի բժիշկներին:

Տեղայնացման մասին որոշումը, սակայն, չի արգելում կանանց ծննդաբերելու իրենց նախընտրած հիվանդանոցում, պարզապես փոխելով իրենց բնակավայրի հիվանդանոցը, օրինակ, մարզից գալով Երեւանի որեւէ հիվանդանոց՝ կանայք ծննդաբերելու համար ստիպված են վճարել 107 հազար դրամ: Բայցեւ որոշումը թույլ է տալիս անվճար սպասարկելու այն հղի կանանց, որոնք արդեն ցավերով դիմում են առաջին իսկ պատահած ծննդատունը ծննդալուծման համար՝ լինի դա Երեւանում, թե մարզերում: Այսինքն՝ նման շտապ դեպքերի համար ծննդօգնությունը դարձյալ անվճար է:

Իսկ արդյոք մարզային բոլոր հիվանդանոցներում պայմաններն անթերի՞ են, մասնագետներն ու սարքավորումները՝ բավարա՞ր ըստ պատշաճի ծննդօգնություն ցուցաբերելու համար: «**Ազգի**» երեկվա համարում անդրադարձել էինք Արտաշատի բժշկական կենտրոնի ծննդօգնության պայմաններին: Հիշեցնենք, որ լրագրողների այցն Արտաշատի ու մարզային եւս երեք հիվանդանոցներ նախաձեռնել էր ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը:

Արարատի մարզում եղանք նաեւ «Արարատ» բուժկենտրոնում, որը վերանորոգվել է 2010 թվին Համաշխարհային բանկի վարկային ծրագրով: Հիվանդանոցում տարեկան շուրջ 300 ծննդաբերություն է լինում, իսկ ամսական կտրվածքով՝ 23-25: Ծնունդները տեղայնացնելու վերաբերյալ առողջապահության նախարարի հրամանից հետո այս հիվանդանոցում շատ բան չի փոխվել, քանի որ Արարատից Երեւան ծննդալուծման համար միայն հատուկենտ կանայք են գալիս՝ տարվա ընթացքում առավելագույնը 10 հոգի, այն էլ, ըստ հիվանդանոցի



*«Արարատ» բուժկենտրոնը*

ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի գործադիր ներկայացուցիչ **Գարիկ Հայրապետյանն** անցկացնելով զուգահեռ Արարատի մարզի երկու հիվանդանոցների՝ Արտաշատի ու Արարատի բժշկական կենտրոնների միջեւ՝ ասում է. «Եթե գտնում են միջոց ունենալու այնպիսի հիվանդանոց, ինչպիսին Արարատինն է, ապա այդ ձեւը կարելի է գտնել նաեւ ծննդօգնություն իրականացնող մյուս հիմնարկների համար: Եթե բոլոր հիվանդանոցները լինեին այնպիսին, ինչպիսին Արարատինն է, ապա հավաստագրի տեղայնացումից մարդիկ չէին բողոքի»:

Արտաշատի բժշկական կենտրոն այցելության ու այնտեղ մեր նկատած խնդիրների մասին կարող եք կարդալ «**Ազգի**» երեկվա համարում:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

# Ոստիկանությունում ՎՊ-ից ...

*1-ին էջից*

**Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների եւ միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային, դրամաշնորհային եւ Հայաստանի պետբյուջեի միջոցների հաշվին «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ նյութերը. Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարարությունում պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգման, ավտոճանապարհների պահպանման եւ շահագործման, հեռահաղորդակցության եւ կապի կանոնակարգման ծառայությունների, կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների օգտագործման ծրագրերի ուղղությամբ ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման եւ բյուջետային մուտքերի ապահովման, ինչպես նաեւ պետական սեփականության կառավարման եւ օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ նյութերը:**

**Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների եւ միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային, դրամաշնորհային եւ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Տրանսպորտի ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ նյութերը:**

**Հայաստանի Հանրապետությանը տրամադրված օտարերկրյա պետությունների եւ միջազգային վարկատու կազմակերպությունների վարկային դրամաշնորհային եւ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին «Արփա-Սեւան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից կատարված ծրագրերի նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ նյութերը:**

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՇՈՒՇԱՆԻՇՆԵՐ

# Հունիսին՝ տնտեսական ակտիվության աճ

**Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության՝ երեկ հրապարակած 2013-ի հունվար-հունիս ամիսների սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն՝ Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4,4 տոկոսով: Հունիսին նախորդ տարվա հունիսի համեմատ տնտեսական ակտիվության աճը կազմել է 1,3 տոկոս, իսկ այս տարվա մայիս ամսվա նկատմամբ՝ 11,9 տոկոս: Սակայն նախ ներկայացնենք այս տարվա առաջին կեսի ցուցանիշներն ըստ տնտեսության ճյուղերի:**

**Այս տարվա առաջին վեց ամիսներին արդյունաբերությունում արձանագրվել է 8,3 տոկոս աճ, գյուղատնտեսությունում՝ 2,1 տոկոս, ծառայությունների ոլորտում՝ 4,4 տոկոս, առեւտրի շրջանառությունում՝ 3,5 տոկոս աճ: Շինարարությունը շարունակում է անկում արձանագրել՝ 8,8 տոկոս:**

**Ինչ վերաբերում է միայն հունիս ամսվա ցուցանիշներին՝ համեմատած նախորդ տարվա հունիսի հետ, ապա արդյունաբերությունում գրանցվել է 9,2 տոկոս անկում, գյուղատնտեսությունում՝ 4,4 տոկոս, շինարարությունում՝ 8,3 տոկոս անկում, առեւտրում՝ 0,1 տոկոս աճ, ծառայություններում՝ 1,5 տոկոս անկում:**

**Հունիսին, նախորդ ամսվա՝ մայիսի համեմատ, արդյունաբերությունն ունեցել է 14,9 տոկոս աճ, գյուղատնտեսությունը՝ 66,5 տոկոս (մայիսին կարկուտի հետեւանքով շինարարությունը անկում էր ունեցել), շինարարությունը՝ 19,4 տոկոս, առեւտուրը՝ 6,7 տոկոս, ծառայությունները՝ 7,1 տոկոս:**

**Արտաքին առեւտրաշրջանառությունը 2013-ի առաջին կիսամյակում 2012-ի նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 0,8 տոկոսով եւ կազմել մոտ 2 մլրդ 671 մլն դոլար: Արտահանումը կազմել է 699 մլն դոլար, արձանագրելով 9,9 տոկոս աճ, ներմուծումը կազմել է 1 մլրդ 971 մլն դոլար, նվազելով 2,1 տոկոսով: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը այս տարվա հունվար-հունիսին կազմել է 1 մլրդ 272 մլն դոլար:**

**Միայն հունիս ամսին արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 3,3 տոկոսով եւ կազմել 477,7 մլն դոլար: Արտահանումը կազմել է 138 մլն դոլար, ավելանալով 12,9 տոկոսով, ներմուծումը կազմել է 339 մլն դոլար, նվազելով 0,3 տոկոսով: Այսինքն, ինչպես միայն հունիսի, այնպես էլ հունվար-հունիսի ցուցանիշներով, Հայաստանից արտահանումն աճել է, իսկ ներմուծումը՝ նվազել:**

**Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-հունիսին կազմել է մոտ 142 հազար դրամ, մասնավոր հատվածում՝ 175 հազար դրամ, պետականում՝ 114 հազար դրամ:**

**Այսպիսով, մայիսին արձանագրված տնտեսական ակտիվության ցուցանիշի անկումից հետո, հունիսին այն կրկին աճել է: Սակայն տնտեսական ակտիվության կիսամյակային 4,4 տոկոս աճի ցուցանիշը դեռ հեռու է տարեկան 6-7 տոկոս տնտեսական աճ ապահովելու կառավարության նպատակից:**

**Ա. Մ.**

# «2,5-3 տոկոսից ավելի տնտեսական աճը չափազանց...»

*1-ին էջից*

**Սակայն մամուլի ասուլիսը ՎԶԵԲ նախագահը սկսեց Հայաստան իր այցելության նպատակների մասին խոսելով: Դրանք երկուսն են՝ նշելու Հայաստանի հետ Եվրոբանկի համագործակցության 20 տարվա ժամանակահատվածը եւ քննարկելու առաջիկա անելիքները:**

**Սումա Չակրաբարտիի հավաստմամբ, ՎԶԵԲ-ը անցած 20 տարիներին Հայաստանի հետ լավ համագործակցություն է ունեցել: Այդ ընթացքում Եվրոբանկը Հայաստանում ներդրել է 1 մլրդ դոլար, որով իրագործվել են մոտ 120 նախագծեր: Ներդրված գումարի 90 տոկոսը հատկացվել է մասնավոր հատվածին՝ հիմնականում ֆինանսական հաստատություններին՝ փոքր եւ միջին բիզնեսին վարկեր տրամադրելու համար: Մինչեւ տարեվերջ նախատեսվում է եւս 120 մլն դոլար ներդնել Հայաստանում: Սումա Չակրաբարտին տեղեկացրեց, որ նույն օրը բանկը 7 մլն դոլար է տրամադրել «Երեւան Ջուր» ընկերությանը ջրակորուստների նվազեցման եւ ջրի որակի բարձրացման համար: Եվս 7 մլն դոլար արդեն դրամաշնորհ էլ տրամադրվելու է այս նպատակով ԵՄ-ից: Այս գումարների տրամադրումը եւ իրականացվող ծրագրերը թույլ կտան նաեւ կանխել ջրի սակագնի բարձրացումը առաջիկայում:**

**Ըստ Եվրոբանկի նախագահի, երկու հիմնական խնդիր կա, որտեղ բանկի եւ Հայաստանի կառավարության եւ գործընկերների կարծիքները համընկնում են՝ տնտեսական աճը պետք է շարունակվի եւ բիզնես միջավայրի բարեփոխումը պետք է շարունակվի: Եվրոբանկը կաջակցի այս երկու ուղղություններով էլ:**

**Սումա Չակրաբարտին նշեց, որ Հայաստանի գործարար միջավայրը բարելավվել է, բայց կոռուպցիայի ցուցանիշը դեռ բարձր է: Ուստի Եվրոբանկը կաջակցի՝ ֆինանսավորելով համակարգային փոփոխությունները: Մասնավոր հատվածին ուղղված ծրագրերից, բացի «Երեւան ջրին» հատկացվածից, նշվեց շշերի արտադրության «Սաւանիս» ընկերության ֆինանսավորումը եւ բանկերի միջոցով էներգաարդյունավետության ծրագրերի ֆինանսավորումը:**

**Հայաստանում բանկերի կողմից բիզնեսին տրվող վարկերի բարձր տոկոսների վերաբերյալ տրված հարցին պատասխանեց Հայաստանում ՎԶԵԲ ներկայացուցիչ Վալերիու Ռազլոգը: Նա ասաց, որ վարկերի տոկոսները տեղական արժույթով իրոք բարձր են եւ բարձր տոկոսները հենց ռիսկ են: «Պետք է ուսումնասիրել, թե ինչո՞ւ են դրանք այդքան բարձր, բայց միեւնույն ժամանակ փոքր ծրագրերի ֆինանսավորումը ավելի ծախսատար է», նշեց Հայաստանում ՎԶԵԲ ներկայացուցիչը:**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960
060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Հանդիպում

# Ե՛վ պետություն, և՛ հայրենիք, և՛ մշակույթ

### Հարցազրույց «Աղբյուր» ամսագրի գլխավոր խմբագիր ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆԻ հետ

***Մեր պետական քաղաքականությունը պետք է լինի պետականությունն ու հայրենիքը համատեղելը, դրանք միասին ընկալելու համար ատաղձ ստեղծելը:***

**- Ըստ Ձեզ, ի՞նչ է նշանակում ապրել:**

- Մի օր ինձ բռնեցի այն փաստի վրա, որ կարծես թե ես իմ ամբողջ կյանքում ոչ թե ապրում եմ, այլ պատրաստվում եմ ապրելու: Հետո նկատեցի, որ այս կյանքում լավ ապրելու հույսը շատերին է ապրեցնում: Բայց մենք պետք է ապրենք նաեւ ԱՊՐԵԼՈՒ պատրաստվելով: Դրա համար ԱՊՐԵԼ է պետք նաեւ այստեղ: Ինձ դա այնքան էլ չի հաջողվում, միայն, թերեւս, գրելիս...

**- Մերօրյա հասարակությունը, եթե կարելի է այսպես ասել, ի՞նչ հերոսի, ի՞նչ առաջամարտիկի, ի՞նչ քաղաքացու «կարիք» ունի:**

- Ընդհանրապես, չեմ սիրում այն ժամանակները, երբ հերոսի կարիք կա, ինձ համար խնդիր է քաղաքացու ստեղծումը, այսօր խնդիր է հենց հերոսներին պաշտպանելը: Ինչքա՜ն անպաշտպան են մեր Արցախյան ազատամարտի հերոսների գերակշիռ մասը, նրանց ընտանիքները: Զոհված տղերքի ընտանիքները, եթե մենք մեզ հարգում ենք, որեւէ խնդիր չպետք է ունենան, թե չէ` ասում ենք փող չկա, այնինչ երկրում միլիոնատերեր, միլիարդատերեր կան: Ուրեմն` փող կա, դրամ կա, բաշխումն է սխալ:

**-Ձեր կյանքի մի մեծ մասը նվիրել եք «Աղբյուրին»: Տարիների հեռվից ինչքա՞ն է փոխվել ամսագիրը, եւ ինչքա՞ն` դուք...**

- Արդեն գրեթե երեսուն տարի աշխատում եմ «Աղբյուրում», որ նախկին «Պիոներն» է: «Աղբյուրում» բոլորն ինձ պես «հնաբնակներ» են, մենք անկեղծորեն մտածում ենք «ժառանգներ» գտնելու մասին, ուզում ենք, որ գան երեխաների համար աշխատել սիրող երիտասարդներ, բայց, ցավոք, առայժմ կարծես թե դա քիչ է հնարավոր: Պատճառը, թերեւս, այն է, որ աշխատավարձերը, մեղմ ասած, ցածր են, ոչ մի երիտասարդ 30-40 հազար դրամ աշխատավարձով չի ուզենա աշխատել:

Ամսագիրն, իհարկե, փոխվել է, գլխավոր փոփոխությունն այն է, որ եթե նախկինում ավելի շատ էջեր հատկացվում էին գրողներին, երեխաների համար գրված ստեղծագործություններին, այժմ ծավալի գերակշիռ մասը տրամադրվում է հենց երեխաներին եւ նրանց ստեղծագործություններին:

Ես էլ եմ փոխվել, բայց այսօր «Աղբյուրի» համար ավելի քիչ չեմ աշխատում, քան նախկինում: Ընդհակառակը, կյանքը, միջոցների բացակայությունը ստիպում են, որ անեմ ոչ միայն խմբագրի, այլեւ սրբագրիչի, համակարգչային աշխատողի եւ այլ գործեր: Այս առումով կարող եմ ինքս ինձ հեգնել. ես ունիվերսալ գլխավոր խմբագիր եմ:

**-Ովքե՞ր են եղել «Աղբյուրի» ակունքներում, ովքե՞ր են աճել, բարձրացել «Աղբյուրի» արահետներով:**

- Ակունքներում Եղիշե Չարենցն է, Ստեփան Զորյանը, իր առաջին քայլերն «Աղբյուրում» է արել Վիկտոր Համբարձումյանը, մեր ամսագրին են շաղկապվում այնպիսի անուններ, ինչպիսիք են Ավետիք Իսահակյանը, Հովհաննես Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Անահիտ Սահինյանը, Վախթանգ Անանյանը, Վազգեն Տայանը, Հայրապետ Հայրապետյանը, Մկրտիչ Կորյունը, Մինասը, Սուրեն Ստեփանյանը, Վահագն Դավթյանը, Գեւորգ Էմինը, Հրանտ Մաթեւոսյանը, Գրիգոր Խանջյանը, Պերճ Զեյթունցյանը, Լեւոն Հախվերդյանը, Հայկ Խաչատրյանը, Ռաֆայել Իշխանյանը, Հայկազ Պողոսյանը, Վալտեր Առամյանը, Կալենցները, Ֆելիքս Գուլանյանը, Հակոբ Հակոբյանը, թող ներվի, եթե ինչ-որ մեկին մոռացա...

**- Ձեր ակունքները...**

- Իմ ակունքները Մշո դաշտում են. ես ծնվել, մեծացել եմ Երեւանում, բայց այդպես էլ ինձ երեւանցի չեմ զգացել: Իմ` երեւանցու պատկերացումը երեւի այլ է, քան, ասենք, Ռուբեն Հախվերդյանի, Մանարյանի, Քոչի եւ այլոց, ովքեր այսօր նաեւ Երեւանն են երգում: Ես ինձ մշեցի եմ համարում, բայց սկզբունքորեն դեմ եմ այն մտածողությանը, որը, «էրգի՞ր, էրգի՞ր» ասելով, մոռանում է այս հողը, որի վրա կանգնած ենք, թույլ չի տալիս Հայաստանի Հանրապետությունը որպես լիարժեք հայրենիք զգալ: Մեզ, ցավոք, թվում է, թե հայրենիքը միայն այն էր, որ մնաց գետի մյուս կողմում, եւ այդ հայրենիքի մորմոքով անուշադրության ենք մատնել մեր պետությունը: Մեր այսօրվա պետության քաղաքականության մի կարեւոր թեւը ուղղված է դեպի կորուսյալ հայրենիքի, Եղեռնի միջազգային ճանաչման խնդիրը, բայց շատ կուզեի, որ կրկնակի ուժով քաղաքականության մյուս թեւը աշխատեր փրկված մեր այս մի կտոր քարուհողը որպես հայրենիք զգալու եւ ծաղկեցնելու համար: Մեկ-մեկ ինձ թվում է, թե շատերի համար սա միայն պետություն է ու ոչ հայրենիք: Մեր պետական քաղաքականությունը պետք է լինի պետականությունն ու հայրենիքը համատեղելը, դրանք միասին ընկալելու համար ատաղձ ստեղծելը:

**- Ստեղծագործող եւ պաշտոնյա (գլխավոր խմբագիր): Նաեւ դասախոս: Այս երեք «դերերը» ինչպե՞ս են համատեղվում-համերաշխվում: Պետական այրերի, քաղաքական գործիչների մասին Ձեր կարծիքը (ըմբռնումը):**

- Այսօր «Աղբյուր» ամսագրի գլխավոր խմբագիրը լինելը պաշտոնյա լինել չէ, ծառա լինել է: Ես ե՛ւ համակարգչային աշխատանք եմ կատարում, ե՛ւ սրբագրություն, ե՛ւ բոլորի հետ բեռնակրություն եմ անում ամսագրի հերթական համարի տպաքանակը տպարանից բերելիս, մի խոսքով... Ես պաշտոնյա չեմ, չեմ էլ եղել նույնիսկ այն ժամանակ, երբ դեռ կառավարական հեռախոսներ կային, նոմենկլատուրային առավելություններ, պաշտոնյա չեմ նաեւ բնույթով, եթե պաշտոնյա լինեի, ինձ հետ արդեն երեսուն տարի աշխատող կոլեկտիվը ցրիվ կգար, որովհետեւ խմբագրության աշխատակիցները պաշտոնական վերաբերմունքից հեռու մարդիկ են, եւ հիշածս ժամանակահատվածում ծանր օրեր շատ են եղել, ու դրանք կարող էին պատճառ դառնալ, որ կոլեկտիվը պառակտվեր: Փառք Աստծո, դա տեղի չի ունեցել: Մենք ընկերներ ենք, եւ խմբագրությունում իմ ասածը հարգվում է այնպես, ինչպես մեծի... Ինձ հարգում են նաեւ իմ մասնագիտական կարողությունների համար: Ես գրող եմ ու խմբագիր, եւ խմբագրի մշտառկա պատասխանատվությունը տեքստի նկատմամբ դժվարացնում է իմ բանաստեղծական գիրը:

Թե ինչպիսի դասախոս եմ, գիտեն միայն ուսանողները:

Ինձ համար պետական այրի խորհրդանիշ են Ալեքսանդր Մյասնիկյանը, Աղասի Խանջյանը, ում հանճարեղ Չարենցն է երգել («Այս գաղթական կանանց ընտանեկան սուգով...»), Արշակ Երկրորդը, Վռամշապուհը, Վասակ Սյունին, Գայլ Վահանը, Արամ Մանուկյանը: Այս ծանր օրերին ունե՞նք արդյոք նման «տրամաչափի» այրեր, այնպիսիք, որ պաշտոն ստանալուց հետո այնքան հարստություն չունենան, որքան երկրի բյուջեն է կամ ավելի: Քաղաքական գործիչներ այսօր չունենք: Իշխանություններից առաջարկված աթոռը, տաքուկ անկյունը մեր քաղաքական գործիչներին արագ ձեռնասուն են դարձնում... Ուրեմն` այն մարդիկ չէին, ինչ որ իրենց էին ներկայացնում...

**- Տարիների հոլովույթով անցած Ձեր ո՞ր գործերը (հոդվածներ, շարքեր), ո՞ր հրատարակումներն եք հատկապես կարեւորում, ինչո՞ւ...**



- Բանաստեղծություններիս ժողովածուները, հատկապես «Երկրից հետո»-ն, «Մայրերու հրեշտակները», «Երկնքից առաջ»-ը, ուսումնասիրություններից` «Կորյունի տեքստը եւ հայ գրի առեղծվածը», քանի որ ե՛ւ ասելիքի, ե՛ւ մեթոդաբանական առումով, կարծում եմ, նորություն է, կարեւորում եմ նաեւ տեքստի եւ հայերենի լեզվամտածողական համակարգի վերաբերյալ հոդվածներս:

**- Գրող եւ հասարակություն. գրական ասպարեզի վերափոխման-վերաարժեքավորման համար ի՞նչ նախադրյալներ, նախապայմաններ եք տեսնում: Գրողը կարո՞ղ է մասնակցել մեր հասարակության ձեւավորմանը, ժողովրդավարության հաստատմանը:**

- Գրականությանը, մշակույթին ընդհանրապես պետական մոտեցում, հովանավորություն է պետք: Պետությունը գրական մամուլին, գրականությանը, նկարչությանը, երաժշտությանը պետք է տա եւ, ներեցեք, երբեք չպահանջի, որովհետեւ պահանջելու դեպքում էլ ոչինչ չի փոխվի, կփոխվի տալու դեպքում. եթե լինի լավ գրականություն, նկարչություն, երաժշտություն, դրանք իրենց ավելի լավ կզգան, եթե տվյալ պահին չլինեն, ուրեմն կընթանա պրոցեսը. սա եւս անչափ կարեւոր է: Ասպարեզը վերափոխելը ես չեմ հասկանում, բայց վերարժեւորելու հրամայական կա: Կարծում եմ մինչեւ օրս էլ դեռեւս ճիշտ գնահատականներ չեն տրվել մեր պատմության շատ կարեւոր հարցերի, դեմքերի. շատ գրական երկեր նորից ընթերցվելու, նոր կերպ, նոր դիտակետից ընթերցվելու կարիք ունեն: Իմ համոզմամբ` այսօր գրականությունը (ե՛ւ դասական, ե՛ւ արդի) մշակութաբանական համատեքստում եւ ենթատեքստում ընթերցելու հրամայական կա, որպեսզի ամեն օրագիր-օրատետր տպագրող իրեն գրող չկարծի եւ իրեն հատուկ, ինչպես սովորաբար նման անձնավորություններին բնորոշ է, մարտնչող «քաղաքացիական» ակտիվությամբ բաղեղի նման չփաթաթվի իրական գրականությանն ու չխեղդի իսկական գրողին` հանրության երեսին թռչելով, երեսից կախվելով, խաղալով գրողի, մտավորականի անվան հետ:

Գրողը ակտիվ հասարակական, քաղաքացիական դիրքորոշում պետք է ունենա նախ իր գրականության մեջ, եւ նրան քարկոծել, թե ինչու միտինգի չի մասնակցում, ճիշտ չէ: Նա, որպես քաղաքացի, փողոց դուրս գալ կարող է, բայց, որպես գրող, ավելի կարեւոր է, որ մնա «տանը»:

Շատ եմ սիրում երգել: Սիրում եմ երգչախմբային արվեստը, երգել եմ համալսարանի «Կոմիտաս», Երեւան քաղաքի «Հայրեն» երգչախմբերում, երգել ենք նույնիսկ Իտալիայի բեմերում: Երգում եմ տոհմիկ երգեր, Սայաթ-Նովա, մեկ-երկու ազգագրական երգ, «Երգում են գրողները» մրցույթի հաղթողն եմ: Երգում եմ, որովհետեւ մի լավ խոսք ունեմ` ով չի երգում, նրա երգը երգված է:

Շատ-շատ եմ սիրում տիեզերքին վերաբերող գիտելիքը, երբեմն ինձ թվում է, թե կթողնեմ ամեն ինչ եւ վերջապես կսկսեմ զբաղվել միայն տիեզերքով, աստղաֆիզիկայով:

Սիրում եմ նաեւ նկարչությունը: Հայաստանում այնքան լավ նկարչություն կա, որ եթե մեր պետությունը զբաղվի գեղանկարների արտասահմանյան ցուցահանդես-վաճառքով, երկրի բյուջեն ահագին կհարստանա:

Գրական ասպարեզում դեռեւս իշխում են օտար գրականություններին կապկելու գործընթացները: Պոեզիայում դեռեւս Բարաբային ենք ընտրում, Քրիստոսին պաշտում ենք խաչվելուց հետո միայն: Եթե հեռուստատեսությանը պետք է մի որեւէ ժամանակակից բանաստեղծի խոսք լսել, «աշխարհագրությունը» երկու կինարմատից այն կողմ չի անցնում. այսօր տեսնում ենք, չէ՞, բոլոր հեռուստահաղորդումներին հյուր են նույն անձինք, ովքեր, երեւի, լրագրող կամ առավելապես հրապարակախոս պետք է լինեին: Ժողովուրդն էլ նայում, ասում է` սա՞ է բանաստեղծը: Նրանք ժողովրդավարության անվան տակ օգնում են «միջազգային», անհայրենիք գաղափարներ տարածելուն, իսկ ես կարծում եմ, որ նման ժողովրդավարությունը մեզ պետք չէ, մեզ պետք է ուժեղ պետականություն, բանակ, գիտություն եւ մշակութային ինքնաճանաչում, կրկնում եմ, մշակութային ինքնաճանաչում. վերջինս մեզ կօգնի ապրել` ինքներս մեզ հարազատ մնալով: Ժողովրդականությունը մասսայի իշխանության գաղափարն է, բայց չէ՞ որ այդ մասսայի մեջ խելոքներն ու իմաստունները թվով ավելի քիչ են, հազարից մեկը, երկուսն են, իսկ երկրի ճանապարհը որոշում են այդ հազարները: Ես կարծում եմ` ամեն մարդ քվեարկելու իրավունք չպետք է ունենա: Եթե մարդն ուզում է քվեի իրավունք ձեռք բերել, ասենք, պետք է գոնե բարձրագույն կրթություն ունենա, կամ ցենզը կարելի է ավելի խստացնել: Թե չէ դոկտորը մեկ քվե ունի, եւ մեկ քվե ունի մի կիսահարբեցող, որ ութերորդ դասարանը հազիվ է ավարտել: Դեմոկրատիան կամ ժողովրդավարությունը, փաստորեն, միջոց ու զենք է, որ մասսայի վրա իշխող մեկը կարողանա իշխել երկրի վրա:

**- Իսկ ի՞նչ նախասիրություններ (հոբի, հակում եւ այլն) ունեք:**

- Երաժշտություն եմ սիրում, ու ինձ թվում է, թե իմ բանաստեղծությունը երաժշտությունն է ստեղծել` մեր միջնադարյան, Կոմիտասի, Եկմալյանի, Մոցարտի, Շուբերտի, Բախի: Երգեր եմ գրել, նույնիսկ ֆոնդային ձայնագրություններ ունեի: Ափսոս, «հազար» տարի է` կիթառին ձեռք չեմ տվել: Բարդերի արվեստն իմը չէ: Ես լուրջ չվերաբերվեցի դրան, թեեւ իմ երգերը բավականին սիրված էին իմ շրջապատում: Ես բանաստեղծ եմ, ու թվում է` չկա էլ ուրիշ վախճան:

**-Ձեր կարծիքով` ի՞նչը կարող է Հայաստանի համար դառնալ (լինել) ազգային գաղափար: Կա՞ որեւէ բան (իդեալ), որին անվերապահորեն հավատում եք:**

- Հայերեն խոսքը չկեղծելը, հայոց լեզվով միայն ճշմարտություն ասելը, այսինքն` մեր մտածողությունն ու հոգեբանությունը չփչացնելը: Հայաստանը մեկ օրում կարթնանա, եթե բոլորս սկսենք միայն ճիշտ խոսել, չկեղծել: Ոչ թե գեղեցիկ խոսել, այլ ճիշտ: Մենք մտածում ենք լեզուն գեղեցիկ պահելու, բայց չենք մտածում լեզուն կեղծիքից հեռու պահելու մասին: Թող հասարակ հայերը, մեր պետական այրերը, բարձր պաշտոններ զբաղեցնողները չկեղծեն մեր լեզուն, եւ Հայաստանը կծաղկի. պարզ, միջոցներ, հսկա ներդրումներ չպահանջող ուղի եմ ցույց տալիս...

Հավատում եմ մարդու մեջ մարդկայինի ու աստվածայինի հաղթանակին, ինչքան էլ ինձ հուսահատեցնեն Հայաստանից հեռացողները: Թեեւ... իմ համոզմամբ` իսկական հայը միշտ Հայաստանում է, նա ուր էլ լինի, միշտ Հայաստանում է...

**- Ձեր ամենանվիրական երեք ցանկությունները աշխարհին, մարդուն, երկրին:**

- Աշխարհին մաղթում եմ սպառազինվելու փոխարեն զարգացնել տիեզերքի յուրացմանն ուղղված աշխատանքը, փնտրել այլ բանական էակների, որոնց գոյությանը հավատում եմ, գտնել նրանց, որպեսզի փարատվի այս Երկրի ծանր մենությունը:

Մեր երկրի՞ն... նախ` զոհված ազատամարտիկների ընտանիքների յուրաքանչյուր անդամի ամեն ամիս նպաստ տրամադրել գոնե նախարարների աշխատավարձի չափով, որոշումը հենց այսպիսի տեքստով էլ կայացնել. դա կլինի գրեթե «քաղաքական» որոշում: Ծերերին այնքան թոշակ տալ, որ պահանջված ուտելիք, թոռնիկներին նվերներ կարողանան գնել: Մյուս ցանկությունների հնարավորությունները թողնում եմ ավելի վառ երեւակայություն ունեցողներին:

Ներեցե՛ք... մեկ ցանկություն եւս` ընտրությունների ֆոնին. կուզենայի, որ մեր երկրում օրենքը սահմաներ բաց, ոչ գաղտնի քվեարկություն, որպեսզի մեր հայրենիք-պետության բախտը որոշեն ուղղամիտ ու համարձակ մարդիկ, նրանք, ովքեր չեն վախենում իրենց տեսակետն արտահայտելուց:

Հարցազրույցը վարեց
ՆԻԿՈԼԱՅ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆԸ

# Դավութօղլուն Բաքու էր տարել ԱՄՆ «պետքարտուղարի՞ ուղերձը»

«Զերկալո»-ի քաղաքական մեկնաբան Ռաուֆ Միրկադիրովը վերջին տարիներին մշտապես բնակվում է Ստամբուլում: Համենայն դեպս, այդպես են ասում նրա որոշ գործընկերները, որ երբեմն վիճարկում են ադրբեջանական լրագրության «մեթրի» այս կամ այն տեսակետը: Դա, սակայն, չի խանգարում, որ Միրկադիրովը համառորեն շարունակի սեփական դատողությունները «հիմնավորել Անկարայում դիվանագիտական աղբյուրներից ստացված հավաստի տեղեկություններով»:

Անդրադառնալով Բաքվում Ահմեդ Դավութօղլուի կողմից օրերս հնչեցրած մտքին, որ «Թուրքիան պատրաստ է գործուն աջակցություն ցուցաբերելու Կովկասում խաղաղության հաստատմանը, որի ճանապարը Լեռնային Ղարաբաղի «ազատագրումն է օկուպացիայից» (չակերտները մերն են- Վ. Ա.) եւ խնդրի կարգավորումը Ադրբեջանի տարածքային ամբողջականության շրջանակներում», Միրկադիրովը երեկ կարծիք է հայտնել, որ «Թուրքիայի բարձրաստիճան պետական գործիչների շուրթերից այդ բովանդակությամբ հայտարարությունների հաճախականության մեծացումը ինչոր տեղ հանրային կարծիքի նախապատրաստում է իրադարձությունների անխուսափելի զարգացմանը»:

Մեկնաբանն այնուհետեւ, դարձյալ վկայակոչելով Անկարայի դիվանագիտական աղբյուրներ, «բացահայտել է իրադարձությունների անխուսափելի զարգացման գաղտնիքը»: Նրա «իրազեկվածությամբ»՝ պատահական չէ, որ Դավութօղլուն եւ Ադրբեջանի ԱԳ նախարար Մամեդյարովը «ունիսոն դժգոհություն են հայտնել ԵԱՀԿ ՄԽ-ից», քանի որ «լուրջ նախապատրաստություն է ընթանում ՄԱԿ-ի ԳԱ շրջանակներում կազմակերպելու քառակողմ՝ ԱՄՆ-Թուրքիա-Ադրբեջան-Հայաստան՝ արտաքին քաղաքական գերատեսչությունների ղեկավարների մակարդակով հանդիպում»:

«Զերկալո»-ի հեղինակի գնահատմամբ՝ «այդ հանդիպումը Ադրբեջանի եւ Հայաստանի նախագահների հանդիպման, որն ամենայն հավանականությամբ տեղի կունենա նախագահական (Ադրբեջանում-Վ. Ա.) ընտրություններից հետո, նախապատրաստական փուլ է լինելու»: Ամենաինտրիգային «տեղեկությունը», որ փոխանցել է Միրկադիրովը, այն է, որ, իբր, «ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրին փորձում է անձնական մասնակցությամբ հասնել ղարաբաղյան հակամարտության եւ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման իրական տեղաշարժերի, եւ հանդիպման ընթացքում նախատեսվում է քննարկել ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում ճեղքման իրական տարբերակներ, ինչը կդառնա հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման ազդակ»:

Ընդ որում, ինչպես ասել են «դիվանագիտական աղբյուրները, նախնական ուրվագծումները (ԼՂ հարցի կարգավորման- Վ. Ա.) արդեն ներկայացվել են ադրբեջանական ղեկավարությանը, բայց աղբյուրները չցանկացան բացել այդ առաջարկությունների էությունը»: Ամփոփելով՝ «Զերկալո»-ի մեկնաբանը «վստահեցրել է, որ այսուհետ խոսքը վերաբերում է ոչ թե գոյություն ունեցող ձեւաչափից (ԵԱՀԿ ՄԽ համանախագահության- Վ. Ա.) ֆորմալ հրաժարմանը, այլ գոյություն ունեցող ձեւաչափի ներսում սեպարատ բանակցային խմբի ձեւավորմանը, ինչպես արդեն մեկ անգամ չէ, որ եղել է»: Եվ, իբր, այդ մասին «պայմանավորվածություններ ձեռք են բերվել պետքարտուղար Քերրիի՝ Հայաստանի եւ Ադրբեջանի ԱԳ նախարարների հետ վերջերս տեղի ունեցած հանդիպումների ընթացքում» (Միրկադիրովից արված բոլոր մեջբերումները տես http://www.zerkalo.az/2013/ssha-predlagayut-provedenie-chetyirehstoronney-vstrechi):

Այսուհետ, ադրբեջանցի մեկնաբանը նկատել է տալիս, որ՝

- կա գոյություն ունեցող ձեւաչափի ներսում սեպարատ բանակցային խումբ ձեւավորելու պայմանավորվածություն,

- նախաձեռնությունը բխել է ԱՄՆ պետքարտուղար Ջոն Քերրիից,

- նախամշակվել են ԼՂ խնդրի կարգավորման «ճեղքումային» տարբերակներ,

- դրանք արդեն իսկ ներկայացվել են ադրբեջանական ղեկավարությանը:

Հատկապես «ուշագրավ է» վերջինը, քանի որ Միրկադիրովի «բացահայտումները» արված են Դավութօղլուի Բաքվի հայտարարության համատեքստում, ինչից հնարավոր է եզրակացնել, որ ղարաբաղյան կարգավորման բանակցություններում «ճեղքում նախատեսող իրական տարբերակներն ադրբեջանական ղեկավարությանն են փոխանցվել» Թուրքիայի արտգործնախարարի կողմից: Բայց եթե «գործընթացի կնքահայրը» Միացյալ Նահանգներն է՝ ի դեմս պետքարտուղար Քերրիի, ապա ստացվում է, որ Դավութօղլուն Բաքու է «տարել ԱՄՆ պետքարտուղարի՞ ուղերձը»:

Սույն «մեկնաբանության» ողջ իդիոտիզմն այն է, որ «Անկարայի դիվանագիտական աղբյուրները» Ռաուֆ Միրկադիրովին ոչինչ չեն ասել, թե ո՞վ եւ ե՞րբ է «Հայաստանի իշխանություններին փոխանցել նախամշակված «ճեղքումային իրական տարբերակները», եւ ո՞րն է պաշտոնական Երեւանի արձագանքը»:

Տեղեկատվական պատերազմը, որ Ադրբեջանը մղում է ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի դեմ, իհարկե, պետք է որ ներառի նաեւ «Անկարայի դիվանագիտական աղբյուրների» մասնակցությունը, բայց մի՞թե Բաքվում այն աստիճան են իրենց «բարձրությունից» գլորվել ավելի ու ավելի ցած, որ կարծում են, թե ռաուֆմիրկադիրովյան «մակարդակի վերլուծություններով» կարող են ինչ-ինչ «խնդիրներ լուծել»: Իրավիճակը հիշեցնում է արցախյան տարածված անեկդոտը. երբ տղան ասում է, որ շուտով կամուսնանա, բայց դեռ կողմերից մեկն է համաձայն՝ նկատի ունենալով իհարկե իրեն:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱԼԱԾԱՆՔ ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ԴԵՄ

# Թուրքիայի ցույցերը արձագանք են գտնում նաեւ Գերմանիայում

Քյոլնից (Գերմանիա) Մուրիել Միրաք-Վայսբախը «Արմինյն միրոր-սփեքթեյթր» շաբաթաթերթը գրում է, որ Թուրքիայում կատարվող բողոքի ցույցերը իրենց արձագանքն են գտնում նաեւ այլ երկրներում, հատկապես Գերմանիայում, որտեղ թուրքական բավական մեծ համայնք գոյություն ունի:



Այնտեղ դատական նոր սկանդալ է բռնկվել ընդդեմ Գերմանիայում ապրող թուրք մի մտավորականի, որը մարդու իրավունքների պաշտպանության հայտնի ակտիվիստ է:

Հետապնդումների զոհը հայտնի գրող, վիպասան եւ թատերագիր Դողան Ախանլին է, որը, խորամուխ լինելով հայերի ցեղասպանության հետ կապված հարցերում, սեմինարներում եւ գիտաժողովներում արտահայտվել է այդ մասին: Եվ դա կատարել է ոչ միայն Գերմանիայում, այլեւ Թուրքիայում, որտեղ հանդես է եկել թուրքական մամուլի էջերում եւ մտավորականության հետ հանդիպումներում: Նա ճանաչված եւ հարգված անձնավորություն է, եւ չի վախենում հետապնդումներից:

Նրա այդ դիրքորոշման համար էլ, հավանաբար, թուրքական իշխանությունները նոր արշավ են սկսել նրա դեմ, վերաբացելով մի հին դատական գործ եւ ցմահ բանտարկություն սպառնալով նրան: Ախանլին ձախակողմյան էր 1980-ական թվերին, եւ այդ ժամանակվա զինվորական իշխանության (1985-87) օրերին ձերբակալվել եւ բանտում կտտանքների էր ենթարկվել: 1991-ին կարողացել էր փախչել Գերմանիա, որտեղ քաղաքական ապաստան եւ հետագայում քաղաքացիություն էր ստացել: Տարիներ անց, 2010-ի օգոստոսին, ցանկանալով այցելել իր հիվանդ հորը, նա մեկնել էր Ստամբուլ, որտեղ օդանավակայանում ձերբակալվել էր եւ բանտարկվել: Նրան չէին թույլատրել այցելել մահամերձ հորը, ոչ էլ մասնակցել թաղման արարողությանը: Նա բանտարկված էր մնացել մի քանի ամիս: Նրա դեմ ներկայացված լուրջ մեղադրանքներից էր այն, որ իբր մասնակցել էր տարադրամի փոխանակման կետերից մեկի վրա կատարված զինված հարձակման, որի ընթացքում մեկ հոգի սպանվել էր: Դատական լսումների ժամանակ նրա փաստաբանները (մեկը՝ Ստամբուլից, մյուսը՝ Քյոլնից) մերժել էին մեղադրանքները:

2010-ի դեկտեմբերին նրան ազատ էին արձակել եւ վտարել Թուրքիայից: Դատավարությունն ու հետագա իրադարձությունները մեծ աղմուկ էին բարձրացրել մամուլի էջերում, եւ մարդու իրավունքների միջազգային ակտիվիստների ճնշման տակ նրա դեմ եղած մեղադրանքները հանվել էին: Հետապնդումները դադարել էին... մինչեւ այս տարվա ապրիլը, երբ Թուրքիայի վճռաբեկ դատարանը հանկարծ որոշում ընդունեց վերաբացելու գործը, չնայած ոչ մի նոր վկայություն չկար նրա դեմ:

Լուրը կայծակի արագությամբ տարածվեց Գերմանիայում: «Նյու Յորք թայմսին» համազոր գերմանական «Ֆրանկֆուրտեր Ալգեմայնե-ցայթունգ» թերթում Թուրքիայի իրադարձություններին հետեւող լրագրողուհի Քարեն Կրուգերը իր հոդվածը վերնագրեց այսպես. «Ում համարում են հանցագործ, նրան էլ դարձնում են հանցագործ»:

«Կարծես ուրիշ բան ու գործ չունեն: Նրանք հին գործեր են վերանայում», գրում է նա՝ հիշեցնելով Ֆրանսիայում ապրող մարդու իրավունքների թուրք պաշտպան Պինար Սելեքի պարագան, որը մի քանի անգամ անմեղ ճանաչվելուց հետո վերջերս դարձյալ ցմահ բանտարկության էր դատապարտվել ի բացակայություն: Սա նշանակում է, որ նա հավիտյան վտարանդի պետք է մնա: Նույն ճակատագիրը սպառնում է Ախանլիին:

Ինչո՞ւ: Կրուգերի կարծիքով՝ ականավոր գրողի ստեղծագործությունների հետզհետե աճող ժողովրդականությունն ու ազդեցությունն է պատճառը: Լրագրողուհին տեղեկացնում է, որ Թուրքիայում լույս տեսնող «Բիրիքիմ» ճանաչված ամսաթերթում Ախանլին հոդված է գրել Բեռլինի «Հարդենբերգշտրասսե» փողոցի նշանակության մասին: Հայտնի է, որ այդ փողոցում է 1921-ին սպանվել Թալեաթ փաշան: Սա երեւի բարկացրել էր իշխանություններին:

Դատական գործի վերանայումը նախատեսված է կատարել Ստամբուլում հուլիսի 31-ին: Ամբաստանյալը հասկանալի պատճառներով ներկա չի լինելու: Բայց նրա փոխարեն Եվրոպայից շատ ճանաչված անձնավորությունների պատվիրակություն է ժամանելու Ստամբուլ: Նախքան մեկնելը նրանք մի շարք միջոցառումներով գործի մանրամասնությունները ծանոթացնում են հանրությանը, որպեսզի ապահովեն նրանց պաշտպանությունը եւս:

«Արդարության վենդետտա» շարժումը, ընդարձակելով իր սահմանները, պայքարում է նաեւ այլ քաղբանտարկյալների ազատ արձակման համար:

Ախանլիի պարագան եւ նրա պաշտպանությունը Թաքսիմ հրապարակի ապստամբերին զորակցելու յուրահատուկ միջոց է դարձել: Չնայած պարզված պաստառների կոչերը տարբեր են, դրանք իրականում դատապարտում են իշխանությունների ամբարտավանությունը ու երկրում մարդու իրավունքների ոտնահարման բազում դեպքերը:

Պատասխանելով թերթի լրագրողների հարցերին Թուրքիայում կատարվող իրադարձությունների մասին՝ Ախանլին հույս է հայտնել, որ Թուրքիան կդառնա առավել կանխատեսելի եւ բանական: «Ցույցերը կարեւոր ուղղորդիչ միջոց են ամբարտավան դարձած որեւէ իշխանության համար: Իշխանությունները պետք է հասկանան, որ ժողովրդավարությունը եւ իրավունքի ու օրենքի գերակայությունը բոլորի համար են», ասել է նա՝ իր ոգեւորությունը արտահայտելով Գերմանիայում ծավալվող ցույցերի նկատմամբ, որոնց մասնակցել են հիմնականում գերմանացիներ, բայց նաեւ այլ համայնքների ներկայացուցիչներ:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

# ԱԱԳ-ն խստացնում է գաղտնի փաստաթղթերի հետ աշխատելու կարգը

ԱՄՆ Ազգային անվտանգության գործակալությունը (ԱԱԳ) հայտարարել է, որ խստացնում է գաղտնի փաստաթղթերի հետ աշխատելու կարգը: Դա անհրաժեշտ է ԿՀՎ եւ ԱԱԳ նախկին աշխատակից Էդվարդ Սնոուդենի իրականացրած տեղեկատվական արտահոսքերն ապագայում կանխելու համար, գրում է «Նյու Յորք թայմս» թերթը:

Այսուհետեւ ԱԱԳ համակարգային կառավարիչները եւ շարքային աշխատակիցները կկարողանան գաղտնի փաստաթղթերի հետ աշխատել միայն երկուսով: Այս նոր կարգը կոչված է խստացնելու աշխատակիցներից յուրաքանչյուրի վերահսկողությունը: Բացի դրանից, ղեկավարությունը պարբերաբար կստուգի, թե ինչպիսի փաստաթղթեր է աչքի անցկացնում այս կամ այն աշխատակիցը:

ԱԱԳ-ում նաեւ պատրաստվում են բարդացնել փաստաթղթերի պաշտպանման համակարգը եւ սահմանափակել շարքային աշխատակիցների շփումն այդ փաստաթղթերի հետ: Ամենակարեւոր տեղեկությունները կծածկագրվեն ավելի բարդ ձեւով, քան արվում է այժմ: Այդ փաստաթղթերի տեքստերը մատչելի կլինեն միայն վերլուծաբաններին, իսկ մյուս աշխատակիցները դրանցով կաշխատեն միայն ծածկագրված տեքստով, հաղորդում է Ասոշիեյթեդ պրես գործակալությունը:

ԱԱԳ-ում անցկացված ներքին քննությունը ցույց տվեց, որ Սնոուդենը իր հրապարակած գաղտնի փաստաթղթերը հայթայթել է ապօրինաբար: Նա դրանք տեսնելու իրավունք չի ունեցել, բայց դա արել է ներքին ցանցահենային գործի միջոցով:

Հունիսին որոշ լրատվամիջոցներում հրապարակվեցին Սնոուդենի փոխանցած ԱԱԳ գաղտնի փաստաթղթերը: Դրանցում կային տեղեկություններ այն մասին, որ ամերիկյան հատուկ ծառայությունները լրտեսում են համացանցի օգտատերերին, հետեւում նրանց նամակագրությանը, ինչպես նաեւ տեղեկություններ հավաքում բջջային հեռախոսներով կատարվող զրույցների վերաբերյալ:

# Աշխարհի բանտարկյալների 1/4-ը ԱՄՆ-ում է

ԱՄՆ-ում զանազան իրավախախտումների համար բանտարկելը պատժի ամենատարածված ձեւն է: Ամբողջ բնակչության նկատմամբ բանտարկյալների տոկոսային հարաբերակցությամբ ԱՄՆ-ը առաջատար է. 100 հազար բնակչին ընկնում է 743 բանտարկյալ: Աշխարհում կալանավորված մարդկանց 1/4-ը գտնվում է ԱՄՆ-ում՝ 2,3 մլն մարդ: Երկրի բանտային համակարգի ծախսերը կազմում են տարեկան 60 մլրդ դոլար, հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Յուրաքանչյուր կալանավորի վրա ծախսվում է տարեկան 24 հազար դոլար: Մնացյալ գումարն օգտագործվում է բանտերի պահպանության, անձնակազմի վարձատրության եւ նոր բանտերի կառուցման նպատակներով:

Պ. Ք.



# Մելինե Անումյանի «Ճանաչում եւ դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները» աշխատությունը ունի նաեւ պրակտիկ նշանակություն

*Ճիշտ օգտագործելու դեպքում կդառնա թուրքական ժխտողականության դեմ պայքարի արդյունավետ միջոց*

Հակառակ հայաստանյան որոշ գիտնականների ենթադրություններին, թե Հայոց ցեղասպանությունը լիարժեք ուսումնասիրված է եւ հայ պատմագրությունը սպառիչ պատասխան է տվել բոլոր հարցերին, դրանցից շատերն առ այսօր բաց են մնում:

Չուսումնասիրված հարցերից թերեւս պետք է առանձնացնել քեմալականների իթթիհատական ծագումը եւ օսմանյան ցեղասպան քաղաքականության ժառանգականությունը, թուրքական ժողովրդական զանգվածների եւ քուրդ աշիրաթների մասնակցությունը հայերի կոտորածներին, պետական կառույցների եւ բանակի դերը, Մուստաֆա Քեմալի մերձավոր շրջապատի հայասպան դիմագիծն ու Թուրքիայի Հանրապետության հիմնադիր կազմի պատասխանատվությունը, Հայոց ցեղասպանության թուրքական ժխտողականությունը, ժխտողականության հարցում իշխանություն-ժողովուրդ համերաշխությունը Թուրքիայում, հայերի ունեցվածքի պետական եւ ժողովրդական հափշտակումը, հայ երեխաների կյանքը «փրկելու» թուրքական նկրտումները, ինչպես նաեւ հայկական հարցի ու Աթաթուրքի տաբուի առնչությունները:

Մինչդեռ անկախության տարիներին Հայաստանում լույս տեսած աշխատությունները զգալի թիվ են կազմում: Ըստ երեւույթին ցեղասպանության հարցին մենաշնորհային մոտեցումն ու աշխատությունների կրկնաբանական բնույթը, որքան էլ դրանք լինեն ստվարածավալ, ներկայացվեն կամ արժանանան պետական մրցանակի, արգելք է եղել, որ լուսաբանվեն նշված հարցերը:

Այդուհանդերձ հրատարակվել են նաեւ բավականին ուշագրավ աշխատություններ: Թեեւ դրանք հատուկ չեն անդրադարձել վերոհիշյալ հարցերին, սակայն զերծ են կրկնաբանությունից, նաեւ նորություն են հայ պատմագրության մեջ: Որպես այդպիսին կարելի է, օրինակ, նշել **Մելինե Անումյանի «Ճանաչում եւ դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919-1921 թթ. եւ 1926 թ.)» աշխատությունը**:

Նախքան աշխատության բովանդակությանն անդրադառնալը պետք է ասել, որ մինչ այդ՝ 2011-ին Արեւմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնը հրատարակել էր հեղինակի «Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» ուսումնասիրությունը: Մ. Անումյանի գրախոսվող «Ճանաչում եւ դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները» գիրքը 2013-ին Երեւանում լույս է ընծայել Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը: Աշխատությունը 167 էջ է, ունի պատասխանատու խմբագիր Արսեն Ավագյանի հեղինակած առաջաբան, ներածություն, եզրակացություն, օգտագործված աղբյուրների եւ գրականության ցանկ:

Գիրքը բաղկացած է 3 գլուխներից: 1-ին գլխում քննարկվում է 1918-ի Մուդրոսի զինադադարի ֆոնին Օսմանյան Թուրքիայում տիրող քաղաքական մթնոլորտը եւ Հայոց ցեղասպանության պատասխանատուների դեմ իրականացված հետաքննությունները: 2-րդ գլուխը ներառում է հայերի տեղահանության եւ կոտորածների




գործով դատավարությունները, քննության ենթարկելով իթթիհատականների պատասխանատվության հարցն ու դրա նշանակությունը քեմալականների ազգային շարժման համար, իսկ 3-րդ գլխում հեղինակը վեր է հանում Քեմալ Աթաթուրքի դեմ մահափորձի մեջ մեղադրվող իթթիհատական գործիչների դատավարությունը, որոնց մեջ էր մեր ժողովրդի դահիճներից դոկտոր Նազիմը, եւ դրանք համեմատում է հայերի տեղահանության ու կոտորածների գործով դատավարությունների հետ:

Համեմատությունը խիստ կարեւոր է ռազմական ատյանում իթթիհատականներին հայկական ջարդերի համար մեղավոր ճանաչելու օսմանյան կառավարության նկրտումները եւ ջարդերի նկատմամբ քեմալականների վերաբերմունքը բացահայտելու առումով: Հայերի տեղահանության եւ կոտորածների մեղադրանքով հարուցված 63 գործերով կայացել է մահապատժի 20 դատավճիռ, սակայն ի կատար է ածվել միայն 3-ը:

Քեմալականների «անկախության» դատարանը առ այսօր առեղծվածային այդ մահափորձի մեջ մեղադրված շուրջ 50 իթթիհատականներից 17-ին դատապարտել է մահապատժի: Դատապարտվածները նույն թվին՝ 1926-ի հուլիս-օգոստոս ամիսներին Աթաթուրքի հրամանով կախաղան են հանվել: Հատկանշական է, որ մինչ «անկախության» դատարանը Աթաթուրքի դեմ դավադրության մեղադրանքով մահապատժի էր դատապարտում այս իթթիհատականներին, նորաստեղծ Թուրքիայի Հանրապետությունում քեմալական կառավարությունը 1926-ի հունիսի 27-ին ընդունած օրենքով «լքյալ գույքերի» ֆոնդից մինչեւ 20 հազար լիրա արժողությամբ կալվածքներ է հատկացնում Թալեաթի, Ջեմալի, Տրապիզոնի կուսակալ Ազմիի, Բեհաեդդին Շաքիրի, մեծ վեզիր Սաիդ Հալիմի, Ջեմալի թիկնապահների, ինչպես նաեւ օսմանյան ռազմական ատյանի որոշումով մահապատժի ենթարկված 3 մարդասպանի ընտանիքներին: Մինչդեռ 1919-ին, երբ կազմավորման փուլում էր քեմալականների ազգային շարժումը, հայկական կոտորածները կազմակերպելու համար իթթիհատական պարագլուխներին անձամբ դատապարտել էր Քեմալ Աթաթուրքը:

Այլ կերպ, եթե 1919-1921 թթ. օսմանյան կայսրության նոր իշխանությունները հայերի տեղահանության եւ կոտորածների համար երիտթուրքերին դատապարտում էին, իսկ ռազմական ատյանը քննում էր Հայոց ցեղասպանության կազմակերպիչների գործը, որ մեղմի Մուդրոսի զինադադարի պայմանները եւ ստեղծի հաշտության նպաստավոր պայմանագրի նախադրյալները, ապա Մուստաֆա Քեմալը իթթիհատականներին նույն մեղադրանքով դատապարտելու միջոցով փորձում էր դրական ազդանշան հաղորդել Անտանտի տերություններին, ամրապնդել քեմալականների դիրքերը, ապահովել ազգային պատերազմների ընթացքը եւ իթթիհատական պարագլուխներին զերծ պահել քեմալական շարժումը դրսից կառավարելու ձեռնարկումներից:

Սակայն անկախ նկրտումներից, «հայերի տեղահանության եւ կոտորածների» համար երիտթուրքերին դատապարտելով օսմանյան կառավարությունը ու ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքը ակամա խոստովանել են պատմական ճշմարտությունը, իսկ Կ. Պոլսո ռազմական ատյանը իթթիհատականների նկատմամբ դատավճիռներով տվել է Հայոց ցեղասպանության իրավական գնահատականը:

Մելինե Անումյանը «Ճանաչում եւ դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները» աշխատության մեջ հենց այդ հանգամանքն է շեշտում: Ճիշտ օգտագործելու դեպքում նրա աշխատությունը կդառնա թուրքական ժխտողականության դեմ պայքարի արդյունավետ միջոց, հետեւաբար կնպաստի Հայոց ցեղասպանության ճանաչմանը: Այսինքն, բացի գիտականից, ունի նաեւ պրակտիկ նշանակություն, իսկ դա աշխատությանը տալիս է առանձնակի արժեք եւ առանձնահատուկ նշանակություն:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

**«PROFILES IN HISTORY»**

# Մերլին Մոնրոյի անհայտ լուսանկարների ցուցադրություն



**Մերլին Մոնրոյի մինչ այժմ չցուցադրված լուսանկարների, որոնք շուտով կներկայացվեն աճուրդային վաճառքի, հեղինակը՝ հանրահայտ Միլթոն Գրինը, արտիստուհու մտերիմ ընկերն է եղել, եւ ոչ միայն: Նրանք միասին հիմնել են պրոդյուսերական ոչ մեծ ընկերություն՝ թողարկելով մի քանի ժապավեն, որտեղ Մերլինը գլխավոր դերերն էր կատարում: Լուսանկարիչն ու իր ընտանիքը արտիստուհու կյանքի տարբեր շրջաններում սատարել են նրան: Մերլինը մի քանի անգամ հյուրընկալվել է Գրինների՝ Կոնեկտիկուտի տանը, մինչեւ հայտնի դրամատուրգ Արթուր Միլլերի հետ ամուսնության պատրաստվելը: Նրանք իրոք մտերիմներ են եղել՝ բարեկամական հարաբերությունների մեջ, ավելին՝ Միլթոնը եղբայրական ջերմ զգացումներ է տածել չափից ավելի կանացի հմայքի տեր այս էության հանդեպ եւ կարողացել է ավելի խորքից ճանաչել ու զգալ նրան: Այս երեւույթը նրա լուսանկարչական օբյեկտիվին հնարավորություն է տվել առավել անկաշկանդ ստեղծելու արտիստուհու կերպարը տարբեր իրավիճակներում:**

**Իրենց մտերմության չորս տարիների ընթացքում Գրինը ստեղծել է հոլիվուդյան լեգենդի ավելի քան 50 լուսանկար, որոնցում սեքս-սիմվոլ համարվող հանրահայտ աստղը ներկայացված է նաեւ միանգամայն անհայտ կողմերով: Լուսանկարչին հաջողվել է բացել նրա կերպարի փխրուն, խոցելի, նույնիսկ անմեղ գծերը: Այդ լուսանկարները անցնող տարիներին ներկայացվել են մասնակիորեն եւ մի զգալի մասը փաստորեն անհայտ է: Այս առումով նրա արխիվը եզակի եւ անգնահատելի է համարվում, որն ինքնին ենթադրում է կոմերցիոն վերաբերմունք:**

**Լուսանկարների վաճառքը կայանալու է հուլիսի 27-ին, Կալիֆոռնիայում, «Profiles in History» աճուրդի տանը: Լուսանկարներից բացի ներկայացվելու են նաեւ բազմաթիվ նեգատիվներ:**

**Ս. Բ.**

# «Էսսե գրքի մասին» գրական մրցույթ

**«Անտարես» հրատարակչությունը հայտարարում է «Էսսե գրքի մասին» գրական մրցույթ: Լավագույն էսսեի հեղինակը կպարգեւատրվի «Անտարես» հրատարակչության լավագույն գրքերի փաթեթով՝10 գիրք: Երկրորդ տեղ գրաված էսսեի հեղինակը կպարգեւատրվի «Անտարես» հրատարակչության լավագույն 5 գրքերի փաթեթով: Իսկ ահա երրորդ տեղը գրաված էսսեի հեղինակը կպարգեւատրվի «Անտարես» հրատարակչության լավագույն 3 գրքի փաթեթով:**

**Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է տրված ցանկից ընտրել որեւէ գիրք (Հովհաննես Գրիգորյան «Նոր տողից», Գագիկ Սարոյան «Դիցաբանական ապագա», Աշոտ Գաբրիելյան «Գրպանի բանաստեղծություններ», Էդուարդ Հարենց «Լեթարգիական արթնություն», Գուրգեն Խանջյան «Հիվանդանոց», Աբել Միքայելյան «Քաղաքական հարբեցողություն», Արամ Պաչյան «Ցտեսություն, ծիտ», Արամ Պաչյան «Ռոբինզոն», Հրաչյա Սարիբեկյան «Երկվորյակների արեւը», Գուրգեն Խանջյան «Ենոքի աչքը», Արմեն Օհանյան «Կիկոսի վերադարձը», Հովհաննես Թեքգյոզյան «Փախչող քաղաքը», Լիլիթ Կարապետյան «Մենախոսություն երկու ձայնով», Հովհաննես Երանյան «Ողորմություն Ֆրոսյային», Սարգիս Հովսեփյան «Դոմինո», Ուիլյամ Շեքսպիր «Համլետ», Ուիլյամ Շեքսպիր «Ռոմեո եւ Ջուլիետ», ինչպես նաեւ «Արձակ 2011, 2012» մրցույթների լավագույն պատմվածքների ժողովածուն՝ «19 պատմվածք», «16 պատմվածք», Հենրի Միլեր «Խեցգետնի արեւադարձը», Ջորջ Օրուել «1984», Էլիֆ Շաֆաք «Ստամբուլի բիճը», Վենեդիկտ Երոֆեեւ «Մոսկվա-Պետուշկի», Ալեքսանդր Դյումա «Կամելիազարդ տիկինը», Լեւոն Խեչոյան «Արշակ արքա, Դրաստամատ ներքինի», Վիկտոր Հյուգո «Փարիզի Աստվածամոր տաճարը», Միխայիլ Բուլգակով «Վարպետը եւ Մարգարիտան», Միխայիլ Բուլգակով «Վիպակներ եւ պատմվածքներ», Մուրացան «Գեւորգ Մարզպետունի», Ստեփան Զորյան «Պատմվածքներ եւ վիպակներ», Ֆիրդուսի «Շահնամե», Ստենդալ «Կարմիրը եւ սեւը», Րաֆֆի «Խենթ», «Խաչագողի հիշատակարանը», Շիրվանզադե «Քաոս», «Պատվի համար», Նար-Դոս «Երկեր», «Կայարան», Աշոտ Աբգարյան «Ինչո՞ւ ցեղասպանություն», Արքմենիկ Նիկողոսյան «Առաքել Դավրիժեցու պատմությունն իբրեւ գրական երկ»):**

**Հարկավոր է ընտրել այս գրքերից մեկը, կարդալ եւ գրել էսսե՝ ուղարկելով esse@antares.am էլեկտրոնային հասցեին: Նույն մասնակիցը կարող է գրել մի քանի էսսե՝ տարբեր գրքերի մասին:**

**Աշխատանքները կհրապարակվեն www.antares.am/esse կայքում, իսկ լավագույն էսսեների ժողովածուն կհրատարակվի առանձին գրքով:**

**Մրցույթին մասնակցելու վերջնաժամկետը 2013 թվականի նոյեմբերի 1-ն է:**

**Իսկ արդյունքները կամփոփվեն 2013 թվականի նոյեմբերի 14-ին:**

**Այս մրցույթը խթանում է, որպեսզի չթուլանա ընթերցողի կապը գրքի հետ:**

# Պերճ Զեյթունցյանին

**«Ազգ»էն իմացայ թէ արդէն 75 գարուններ դիմաւորած ես: Սրտագին կը շնորհաւորեմ եւ կը մաղթեմ քեզի շատ ու շատ առողջ եւ բեղուն գարուններ, ի փառս մեր գրականութեան ու թատրոնին: Մտապատկերիս մէջ Պերճ Զեյթունցեանը միշտ գարնան հետ զուգակցուած կը մնայ:**

**Սեպտեմբերին, երբ Հայաստան գամ, անպայման կը տեսնուինք:**

**Քեզ սիրող եւ մեծապէս գնահատող գրչեղբայրդ՝**

ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆ
Լոս Անճելըս

ԱԶԳ

# Մարզական

# «Փյունիկը» հայտնվեց ծանր կացության մեջ

Ֆուտբոլի Եվրոպայի լիգայի որակավորման 2-րդ փուլի առաջին խաղում Երեւանի «Փյունիկն» անհաջող հանդես եկավ Վիլնյուսում՝ 0-2 հաշվով զիջելով տեղի «Ժալգիրիսին»: Հանդիպումը ցույց տվեց, որ «Ժալգիրիսը» բնավ էլ ուժեղ մրցակից չէր: Դաշտի տերերը հիմնականում խաղում էին բարձրից տուգանային հրապարակ կատարած փոխանցումներով՝ հույս ունենալով հաղթող դուրս գալ փյունիկցիների հետ օդային մենամարտերում: Ճիշտ է, «Ժալգիրիսը» «Փյունիկի» դարպասը գրավեց խաղային այլ իրավիճակներում: Երկու դեպքում էլ լիտվացիները հաջողության հասան «Փյունիկի» պաշտպանների անփույթ խաղի շնորհիվ: Ընդմիջումից անմիջապես հետո ձախ թեւից «Ժալգիրիսի» ռմբարկու Բիլինսկին ներխուժեց տուգանային հրապարակ եւ սուր անկյան տակ գրավեց Գոռ Մանուկյանի պաշտպանած դարպասը: Իսկ 66-րդ րոպեին «Ժալգիրիսի» հերթական գրոհի ժամանակ դարպասապահի դիմաց մենմենակ հայտնվեց Լեյուգան եւ հանգիստ գրավեց դարպասը: Այդ դրվագում «Փյունիկի» պաշտպանները դիտողի դերում էին եւ կանգնել սպասում էին, որ մրցավարը «խաղից դուրս» վիճակ կարձանագրի:



Կարո՞ղ էր «Փյունիկն» այդ խաղում այլ արդյունք գրանցել: Իհարկե կարող էր, եթե գործեր մտածված, հուսալի խաղար պաշտպանությունում եւ իրացներ գոլային պահերը: Իսկ դրանք խաղի ընթացքում «Փյունիկը» ստեղծեց: Կարող էին հաջողության հասնել Աղվան Պապիկյանն ու Դավիթ Մանոյանը:

«Փյունիկը» հայտնվեց դժվարին կացության մեջ: Հուլիսի 25-ին Երեւանում կկայանա մրցակիցների պատասխան հանդիպումը, որում «Փյունիկին» անհրաժեշտ կլինի 3 գնդակ խփել մրցակցի դարպասը՝ միեւնույն ժամանակ սեփականը պահելով անառիկ: Հաշվի առնելով «Փյունիկի» ցուցադրած խաղի որակը, դժվար է հավատալ ընդհանուր հաջողությանը: Բայց ամեն դեպքում Երեւանում փյունիկցիները պետք է ձգտեն պատվով դուրս գալ դժվարին փորձությունից:

Ի դեպ, երեկ շվեյցարական Նիոնում կայացել է չեմպիոնների լիգայի եւ Եվրոպայի լիգայի որակավորման 3-րդ փուլի մասնակիցների վիճակահանությունը: Եթե «Փյունիկին» հաջողվի հաղթահարել 2-րդ փուլի արգելքը, ապա կմրցի «Հոնկա» Ֆինլանդիա-«Լեխ» Լեհաստան զույգի հաղթողի հետ: Առաջին խաղում «Լեխը» հյուրընկալվելիս հաղթել է 3-1 հաշվով: 3-րդ փուլի խաղերը կկայանան օգոստոսի 1-ին եւ 8-ին:

Իսկ եթե «Շիրակը» կարողանա հաղթահարել «Պարտիզանի» արգելքը, ապա 3-րդ փուլում կմրցի Սլովակիայի «Սլովանի» եւ բուլղարական «Լուդոգորեցի» մրցավեճի հաղթողի հետ: Առաջին խաղում Սլովակիայի չեմպիոնը սեփական հարկի տակ հաղթել է 2-1 հաշվով:

# Աբրահամը 3-րդ անգամ կմենամարտի Շտիգլիցի հետ

Չի բացառվում, որ Արթուր Աբրահամը 3-րդ անգամ մենամարտի WBO-ի վարկածով 2-րդ միջին քաշային կարգում աշխարհի ներկայիս չեմպիոն Ռոբերտ Շտիգլիցի հետ: Դրա համար նախ անհրաժեշտ է, որ Արթուրը հաղթանակով ավարտի օգոստոսի 24-ին Նամիբիացի Վիլբերֆորս Շիհեպոյի հետ կայանալիք մենամարտը: Այդ դեպքում նա կարող է դառնալ աշխարհի չեմպիոնի տիտղոսի հավակնորդ, քանի որ WBO-ի վարկանիշային աղյուսակում ներկայումս 4-րդ տեղում է:



Բանն այն է, որ վարկանիշային աղյուսակը գլխավորող Ջորջ Գրուվսը հաջորդ մենամարտը կարող է անցկացնել IBF-ի եւ WBA-ի վարկածներով աշխարհի ներկայիս չեմպիոն Կարլ Ֆրոչի հետ: 2-րդ տեղում ընթացող Լուչիան Բետեն վնասվածք ունի, իսկ լավագույն եռյակը եզրափակող Ջեյմս Դեգեյլը խնդիրներ ունի պրոմոութերական ընկերության հետ: Այնպես որ Աբրահամ-Շտիգլից մենամարտի կայացման հավանականությունը մեծ է:

Հիշեցնենք, որ 2012-ի օգոստոսի 25-ին Արթուրը Բեռլինում միավորներով հաղթել էր Շտիգլիցին՝ նրանից խլելով աշխարհի չեմպիոնի գոտին: Իսկ այս տարվա մարտի 23-ին Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքում անցկացված մենամարտում Շտիգլիցը ռեւանշի հասավ ու վերադարձրեց աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Մենամարտն ընդամենը 3 ռաունդ տեւեց: Աբրահամը աչքի լուրջ վնասվածք էր ստացել, ուստի մրցավարը թույլ չտվեց նրան շարունակելու մենամարտը՝ պարտություն գրանցելով հայ բռնցքամարտիկին:

# Հայաստանը կներկայացնեն 4 շախմատիստներ

**Հուլիսի 23-ին Սերբիայի մայրաքաղաք Բելգրադում կմեկնարկի շախմատի Եվրոպայի կանանց 14-րդ անհատական առաջնությունը: Չեմպիոնուհու տիտղոսի համար Հայաստանից մրցավեճի կբռնվեն գրոսմայստերներ Լիլիթ Մկրտչյանը, Մարիա Կուրսովան, Լիլիթ Գալոյանը եւ միջազգային վարպետ Աննա Հայրապետյանը:**

# 20 հազար ֆունտով կարելի է խաղալ անգլիական թիմում

Ֆուտբոլի Անգլիայի 5-րդ դիվիզիոնի առաջնության մասնակից «Մաքսֆիլդ Թաունը» ֆինանսական լուրջ խնդիրների առջեւ է հայտնվել: Մինչեւ օգոստոս ակումբին 100 հազար ֆունտ ստեռլինգ է անհրաժեշտ գոյությունը պահպանելու համար: Այդ նպատակով թիմի ղեկավարությունը ստիպված է դիմել յուրօրինակ քայլի: 20 հազար ֆունտ ստեռլինգի դիմաց թիմը պատրաստ է իր շարքերն ընդգրկել 18-35 տարեկան տղամարդկանց: Նրանց հնարավորություն կտրվի մարզվելու թիմի հետ, ինչպես նաեւ 10 րոպե հանդես գալ առաջնության կամ գավաթի խաղարկության խաղում:

# «Մանչեսթր Յունայթեդը» նոր առաջարկ կանի Բեյլի հարցով

«Մանչեսթր Յունայթեդը» պատրաստվում է նոր առաջարկ կատարել «Տոտենհեմին» թիմի կիսապաշտպան Գարեթ Բեյլի տեղափոխության հարցով: Ակումբը պատրաստ է նրա տրանսֆերի համար 70 մլն եվրո վճարել:

«Տոտենհեմի» նախագահը հայտարարել է, որ Բեյլի ծառայություններից կհրաժարվի միայն 100 մլն եվրոյի դիմաց: Իսկ ավելի վաղ ֆուտբոլիստը հայտարարել էր, որ ցանկանում է մնալ «Տոտենհեմում»: Վերջինս պատրաստվում է երկարաձգել Բեյլի պայմանագրի ժամկետը՝ նրան ավելի բարձր աշխատավարձ առաջարկելով: Բեյլով հետաքրքրվում է նաեւ Մադրիդի «Ռեալը»:

## ՇԱԽՄԱՏ

# Սերգեյ Մովսիսյանը նվաճեց գլխավոր մրցանակը

**Չեխական Պարդուբիցե քաղաքում անցկացված արագ շախմատի մրցաշարում հիանալի հանդես եկավ Սերգեյ Մովսիսյանը, որը 9 հնարավորից վաստակած 7,5 միավորով նվաճեց գլխավոր մրցանակը: Նա լրացուցիչ գործակիցներով գերազանցեց ռուսաստանցի Ալեքսանդր Շիմանովին:**



**Մովսիսյանը հաղթեց Կոնստանտին Կազակովին, Ջոնաթան Վեսբերգին, Կասպեր Պիորունին, Միխայիլ Մոժարովին, Կիրիլ Բրիզգալինին ու Թամիր Նաբաշիին, ոչ-ոքի խաղաց Բոգդան Լալիչի, Կոնստանտին Չեռնիշովի եւ Վլադիմիր Սերգեեւի հետ:**

**Հիշեցնենք, որ վերջերս Մովսիսյանը գերազանց ելույթ էր ունեցել նաեւ Սլովակիայի Բանսկա Շտյավնիցա քաղաքում անցկացված կայծակնային խաղի մրցաշարում՝ 11 հնարավորից վաստակած նույնքան միավորով գրավելով առաջին տեղը: Նա մոտակա մրցակցից՝ գրոսմայստեր Միկուլաս Մանիկից առաջ էր անցել 2,5 միավորով:**

# Գաբուզյանն առաջին պարտությունը կրեց

**Մինսկի շախմատի մրցաշարի 6-րդ տուրն անհաջող էր Հովհաննես Գաբուզյանի համար, որն առաջին պարտությունը կրեց: Գաբուզյանը 4 միավորով նահանջեց 18-րդ հորիզոնական:**

**Իսկ ահա Արտաշես Մինասյանն ու Սամվել Տեր-Սահակյանը հաղթելով համապատասխանաբար Դենիս Տրիֆոնովին եւ Սերգեյ Վաշչիլովին, 4,5-ական միավորով բարելավեցին իրենց դիրքերը: 4 միավոր ունի Հայկ Մարտիրոսյանը, որը հաշտություն կնքեց Նիկոլայ Ալիավդինի հետ: 5,5-ական միավորով առաջատարներն են Ալեքսանդր Կոչեւը եւ Վլադիսլավ Կովալեւը:**

# Կարեն Գրիգորյանը բարելավեց դիրքերը

**Իսպանիայում ընթացող շախմատի մրցաշարի 6-րդ տուրում Հովիկ Հայրապետյանը պարտվեց Ալեքսանդր Կովչանին եւ 4 միավորով նահանջեց 17-րդ հորիզոնական: Իսկ ահա Կարեն Գրիգորյանը հաղթելով Ռոբերտ Ալոմային, 4,5 միավորով հանգրվանեց 8-րդ տեղում: Տուրն անհաջող էր Մարկ Բասենցյանի համար, որը պարտվեց Օստեն Լովիկին: Մարկն ունի 2,5 միավոր:**

**Աղյուսակը շարունակում է գլխավորել նորվեգացի Սիմեն Ագդեստայնը, որը 6-րդ անընդմեջ հաղթանակը տոնեց Հիպոլիտո Ասիսի հետ մրցավեճում:**

# Գեւորգ Հարությունյանը զիջեց առաջատարի դիրքը

Փոթիում ընթացող Նանա Ալեքսանդրիայի գավաթի խաղարկության 7-րդ տուրն անհաջող դասավորվեց A մրցաշարի առաջատարներից մեկի՝ Գեւորգ Հարությունյանի համար, որը պարտվեց Լեւան Պանցուլայային: Անհաջողության մատնվեց նաեւ Լեւոն Բաբուջյանը, որը զիջեց Լուկա Պայչաձեին: Իսկ ահա Սեդրակ Մաթեւոսյանը հաղթելով Իվերի Չիխլաձեին, վաստակեց 5 միավոր եւ զբաղեցրեց 6-րդ տեղը: Նույնպիսի արդյունքով 3-րդ տեղում է ընթանում Գեւորգ Հարությունյանը: Բաբուջյանը 4,5 միավորով 10-րդ տեղում է: 6-ական միավորով առաջատարներն են Լեւան Պանցուլայան եւ Լուկա Պայչաձեն:

B խմբի մրցաշարում Մամիկոն Մարտիրոսյանը ոչ-ոքի խաղալով Լեւան Բերայայի հետ, վաստակեց 5,5 միավոր: Նա մեկ միավոր է զիջում աղյուսակը գլխավորող Իրակլի Կելեպտիշվիլուն: 4,5-ական միավոր ունեն Արմեն Հարությունյանն ու Էդմոնդ Խաչատրյանը:

Մինչեւ 12 տարեկանների մրցաշարում հայերից լավագույնը Արտաշես Առաքելյանի ելույթն է, որն ունի 4,5 միավոր: Նա պարտվեց Նիկա Խվադագիանիին: 5,5 միավորով առաջատարներն են Ցոսնե Մամուլայշվիլին, Մատե Թողաշվիլին եւ Նիկա Խվադագիանին:

Մինչեւ 10 տարեկանների մրցավեճում հայ պատանիներից առավել հաջող ելույթ է ունենում Արման Գրիգորյանը, որն ունի 4,5 միավոր: 7-րդ տուրում նա հաշտություն կնքեց Նիկա Կեւլիշվիլու հետ: Այստեղ առաջատարը 6,5 միավոր վաստակած Մանի Զահեդին է:

Մինչեւ 8 տարեկանների մրցաշարում Հայկ Գրիգորյանը 3,5 միավորով 22-րդ տեղում է: Առաջատարը 6 միավոր վաստակած Գեորգի Ջիքիան է:

# Ռունին չի վաճառվում

Անգլիական երկու ակումբներ՝ «Չելսին» եւ «Արսենալը» ցանկանում են իրենց կազմում ընդգրկել Անգլիայի հավաքականի եւ «Մանչեսթր Յունայթեդի» հարձակվող Ուեյն Ռունիին:

«Չելսին» պատրաստ է Ռունիին շաբաթական 200 հազար ֆունտ ստեռլինգ վճարել, ինչը թիմի ֆուտբոլիստների մեջ ամենաբարձր աշխատավարձը կլինի: Ներկայումս «Չելսիում» ամենաբարձր վարձատրվող ֆուտբոլիստներն են Ֆեռնանդո Տորեսն ու Ջոն Թերին, որոնք շաբաթական 175 հազար ֆունտ ստեռլինգ են ստանում:

Սակայն «Մանչեսթր Յունայթեդը» մերժել է 27 մլն ֆունտ ստեռլինգով Ռունիին վաճառելու առաջարկը: Թիմի գլխավոր մարզիչ Դեւիդ Մոյեսը հայտարարել է, որ ֆուտբոլիստը չի վաճառվում եւ ամռան տրանսֆերային շրջանում այլ ակումբ չի տեղափոխվի:

Նշենք, որ երբ Ալեքս Ֆերգյուսոնը հայտարարել էր «Մանչեսթր Յունայթեդից» հեռանալու մասին, Ուեյն Ռունին եւս ցանկություն էր հայտնել լքելու անգլիական ակումբի շարքերը: Ռունին թիմի կազմում հանդես է գալիս 2004-ից: Նա անցկացրել է 278 խաղ, խփել է 141 գոլ:

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

## Օրվա հետքերով

# Երկու շաբաթում երկու մահափորձ Եգիպտոսի պաշտպանության նախարարի դեմ



Եգիպտական «Ալ Յոում աս Սաբաա» թերթը հաղորդում է, որ նախագահ Մուհամմեդ Մուրսիի տապալումից հետո իսլամիստները երկու անգամ մահափորձ են կատարել պաշտպանության նախարար, գեներալ Աբդել-Ֆաթահ աս Սիսիի դեմ:

Առաջին մահափորձը կատարվել է անցյալ շաբաթ Էլ Արիշայի օդանավակայանում (Սինայի թերակղզու հյուսիս), ուր գաղտնի այցով պետք է ժամաներ աս Սիսին: Իսլամիստ գրոհայինները գնդակոծել են C-130 օդանավը՝ ենթադրելով, թե պաշտպանության նախարարն այնտեղ է: Սակայն այդ օդանավում կային միայն եգիպտական բանակի զինծառայողներ:

Երկրորդ մահափորձը ձեռնարկվել է երկուշաբթի օրը՝ հուլիսի 15-ին, երբ աս Սիսին պետք է նախագահական պալաս ժամաներ նախագահի պաշտոնակատար Ադլի Մանսուրի հետ խորհրդակցելու: Մի բարձրաստիճան պաշտոնյա հիշյալ թերթի խմբագրությանը հայտնել է, որ մահափորձը եղել է անհաջող, չնայած գրոհայինները հանրապետական պահակազորի համազգեստ էին հագել եւ զինված էին արդիական զենքով:

Պաշտոնյան վստահ է, որ երկու մահափորձերն էլ կազմակերպել է «Մահմեդական եղբայրներ» շարժումը:

Հրապարակման մեջ նաեւ ենթադրություն է արվում, թե մի քանի օր առաջ Սուեզ քաղաքի մոտակայքում կալանված «Գրադ» հրթիռները նախատեսված են եղել կառավարական հիմնարկների, մասնավորապես պաշտպանության նախարարության, գնդակոծումների համար:

Պաշտոնյան հայտնել է, որ չնայած մահափորձերին՝ գեներալ աս Սիսին սեփական անվտանգության ապահովման արտակարգ միջոցներ չի ձեռնարկում, շարունակում է ամեն առավոտ վազել եւ սպորտով զբաղվել, պահպանելով եգիպտական բանակի մարտական ոգին:

**ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼ**

# Պատերազմը Սիրիայում մղում է հայերին օգնել միմյանց

**«Լոս Անջելես թայմսում» Բրիտանի Լիվայնը գրում է, որ Հալեպում ծնված, այժմ Գլենդեյլում անշարժ գույքի գործակալ Զավեն Խանջյանին հասկանալու համար անհրաժեշտ է մոտ մեկ դար հետ գնալ: «Հայերն այդ երկրում հաստատվել են այն բանից հետո, երբ 1915 թվին Թուրքիայում իրագործված ցեղասպանության օրերին տարագրվեցին դեպի անապատները: Հիմնականում արաբներով բնակեցված Սիրիան գրկաբաց ընդունեց հուսալքված, անօթեւան քրիստոնյաներին, որոնք հիմնականում ապաստան գտան Հալեպում: Խանջյանը ցանկանում է, որ համայնքը շարունակի կենսունակ մնալ: Բայց երկրին երախտապարտ լինելով հանդերձ, հազարավորներ լքում են այն եւ նույնիսկ հայերի ցեղասպանություն խորհրդանշող հուշարձանն է ավերվել: Մարդասիրական օգնությունը առաջնահերթ խնդիր է, բայց պատմականորեն կարեւոր նշանակություն ունեցող համայնքը պահպանելը շատ ավելի այժմեական խնդիր է: Անցյալ տարի սկզբնավորված «Սիրիահայերի օգնության հիմնադրամը» մարդասիրական այլ կազմակերպությունների հետ 500 հազար դոլար է ուղարկել սիրիահայերին: Հոլիվուդում կազմակերպված բարեգործական համերգից էլ հավելյալ 100 հազար դոլար է գոյացել: Այդ գումարներով սնունդ, հագուստ եւ դեղորայք է մատակարարվում Սիրիայի հայ կարիքավորներին:**

**Նախքան հակամարտությունը մոտ 70 հազար հայեր էին ապրում Սիրիայում, որոնցից 70 տոկոսը՝ Հալեպում: Պատասխանատու մարմինները ցանկանում են, որ, հակառակ դժվարություններին, մարդիկ շարունակեն մնալ, որովհետեւ մշակութային հսկայական ժառանգություն գոյություն ունի այնտեղ, գրում է հոդվածագիրը:**

Հ. Ծ.

# Դետրոյթն իրեն սնանկ հայտարարեց վարկատուներից փրկվելու համար



ԱՄՆ-ի խոշորագույն քաղաքներից մեկը՝ «ամերիկյան ավտոմոբիլաշինության օրրան» Դետրոյթը իրեն սնանկ է հայտարարել վարկատուներից պաշտպանվելու համար:

Ֆինանսական սնանկության ճանաչման արարողակարգ սկսելու պաշտոնական խնդրագիրը ԱՄՆ հատուկ դաշնային դատարանին է ներկայացվել հուլիսի 18-ին: Նախաձեռնողը քաղաքի ճգնաժամային կառավարիչ Քեւին Օրն է:

Իրավաբան եւ ֆինանսիստ Քեւին Օրը մի անգամ արդեն սնանկացումից փրկել է «Քրայսլեր» ավտոմոբիլաշինական կոնցեռնը: Հիմա նա դաշնային դատավորից ժամանակ է խնդրում քաղաքային ակտիվներից գլուխ հանելու եւ վարկատուների հետ բանակցելու համար: Թույլտվություն ստանալու դեպքում Օրը կկարողանա լուծարել քաղաքային ակտիվները, որպեսզի միջոցներ գտնի պարտքերն ու նպաստները վճարելու համար:

Նրա կանխատեսումների համաձայն, ապագայում քաղաքի արտաքին պարտքը կարող է հասնել մինչեւ 20 մլրդ դոլարի: Ուստի սնանկ հայտարարվելը կարող է առաջին քայլը դառնալ Դետրոյթը պարտքերից փրկելու ճանապարհին, նշում է BBC հեռուստառադիոկորպորացիան:

Անցյալ ամիս Դետրոյթը ստիպված դադարեցրել էր արտաքին պարտքերի վճարումները, որպեսզի կատարի կենսաթոշակների, սոցփաթեթների վճարումները եւ քաղաքային ենթակառույցի պահպանմանն ուղղված մուծումները:

Այսպիսով, ԱՄՆ-ի պատմության մեջ Դետրոյթը դարձավ իրեն սնանկ հայտարարած ամենամեծ քաղաքը: Մնում է, որ այդ որոշումը ստորագրի Միչիգանի նահանգապետ Ռիկ Սնայդերը:

Եթե դատարանը այսպես կոչված 9-րդ հոդվածի համաձայն սնանկ ճանաչի Դետրոյթը, ապա քաղաքը կհայտնվի պարտքի վճարումը կարգավորող դաշնային օրենքի պաշտպանության տակ, հաղորդում է «Ամերիկայի ձայն» ռադիոկայանը: Այդ օրենքի շրջանակներում քաղաքը կդադարեցնի պարտքերի սպասարկումը եւ կբանակցի վարկավորման նոր պայմանների շուրջը:

Դետրոյթը ֆինանսական անչափ լուրջ դժվարություններ է ապրում: Քաղաքի բյուջեի պակասորդը հասնում է 380 մլն դոլարին, իսկ ընդհանուր պարտքը գրեթե 18 մլրդ դոլար է:

Ամերիկյան երբեմնի բարգավաճ քաղաքը սկսեց անկում ապրել երեք տասնամյակ առաջ: 2000 թվականից մինչեւ օրս քաղաքի բնակչությունն ավելի քան կիսով չափ կրճատվել է՝ հասնելով 700 հազարի: Ենթակառույցը խոր ճգնաժամի մեջ է, ամբողջ շրջաններ ամայացել են, բարձր է հանցագործությունների մակարդակը:

Ավելի վաղ՝ 2012 թվականին իրենց սնանկ էին հայտարարել Կալիֆոռնիայի երեք քաղաքներ՝ Ստոքտոնը, Մամմոտը եւ Սան Բեռնարդինոն:

**Պ. Ք.**

**ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ**

# Կամերային երաժշտության համերգ «Ալտի շուրջ»

**Այսօր, հուլիսի 20-ին, ժամը 19:00-ին, Թալալյան եղբայրների անվան միջազգային ամենամյա 4-րդ փառատոնի շրջանակներում կկայանա Կամերային երաժշտության համերգ՝ «Ալտի շուրջ»: Համերգը տեղի կունենա Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը (հասցե՝ Իսահակյան փ. 1շ):**

**Համերգային ծրագրում կհնչեն Վ. Ա. Մոցարտ, Յ. Բրամս, Ա. Ռոլլա, Ս. Պրոկոֆիեւ, Պ. Հինդեմիթ, Վ. Ֆ. Բախ՝ Մերի Ղոլմազյանի (ալտ), Յանա Դարյանի (ալտ), Աննա Եսայանցի (ալտ), Արամ Թալալյանի (թավջութակ), Լուսինե Հակոբյանի (դաշնամուր), Թերեզա Նաչարյանի (ջութակ) կատարմամբ:**

**Երեկոյի հատուկ հյուրերն են՝ դաշնակահար Արմեն Բաբախանյանը, ԱՄՆ-ից Վադիմ Լանդոն (կլառնետ), Գերմանիայից մեր հայրենակից ջութակահար Հովհաննես Մոկացյանը:**

**Մուտքը համերգասրահ ազատ է:**

# Երեւանում է «Տաշեղ» (A Splinter) խումբը

**Հուլիսի 21-ին՝ ժամը 19:00-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա «Տաշեղ» (A Splinter) խմբի Երեւանյան համերգը: «Տաշեղ»-ը Լոս Անջելեսում ստեղծված հեղինակային երգի եւ գլոբալ ֆոլկլորի (world music) միավորություն է՝ երկլեզու երգացանկով: Երգերը հիմնված են իրական դեպքերի վրա՝ ընդգրկելով զանազան թեմաներ՝ սիրուց մինչեւ պատերազմ: «Տաշեղ»-ի երգերը հայերեն են եւ անգլերեն, բայց երաժշտությունը՝ չունի ազգային սահմանափակումներ:**

**Երեւանյան համերգին կմասնակցեն Լոս Անջելեսից ժամանած խմբի ղեկավար, երգիչ-երգահան Աշոտ Թադեւոսյանը, Վահան Արծրունու խմբի եւ Lighthouse New Jazz Project-ի կիթառահար Վարդան Գասպարյանը, Miqayel Voskanyan & Friends Band-ի հարվածային գործիքների վարպետ Էդուարդ Հարությունյանը եւ Ֆիլհարմոնիկ նվագախմբի կոնտրաբասիստ Տիգրան Ոսկանյանը: Ձայնակցողներ՝ Հռիփսիմե Աղաբաբյան եւ Մելինե Հակոբյան:**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համակարգչային տեխնիկա, ցուցադրման սարքավորումներ, ցանցային սարքավորումներ, հարակից սարքավորումներ եւ սերվերներ ձեռքբերելու նպատակով կազմակերպություն ընտրելու համար բաց ընթացակարգ կազմակերպելու մասին**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը կազմակերպում է բաց ընթացակարգ՝ ՀՀ կենտրոնական բանկի կարիքներն ապահովվելու նպատակով համակարգչային տեխնիկա, ցուցադրման սարքավորումներ, ցանցային սարքավորումներ, հարակից սարքավորումներ եւ սերվերներ ձեռք բերելու նպատակով մատակարար կազմակերպություն ընտրելու համար:

Բաց ընթացակարգին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության եւ օտարերկրյա իրավաբանական եւ ֆիզիկական անձինք, որոնք բավարարում են սույն հայտարարությամբ եւ հրավերով սահմանված որակավորման չափանիշներին եւ ունեն գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, տեխնիկական եւ ֆինանսական միջոցներ:

Բաց ընթացակարգին մասնակցել ցանկացող անձինք պետք է բավարարեն հետեւյալ պահանջներին՝

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ.

5) աշխատանքային ռեսուրսներ:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել թղթային ձեւով, Հայաստանի Հանրապետություն կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Մասնակիցները կարող են իրենց հայտերը ներկայացնել մինչեւ 2013թ. օգոստոսի 29-ի ժամը 16:00 «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ» ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Հայտերի բացման նիստը անց է կացվելու ՀՀ կենտրոնական բանկում՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով, 2013թ. օգոստոսի 29-ին ժամը 16:00:

Մրցույթի արդյունքների ամփոփման նիստը հրավիրվում է 2013թ. սեպտեմբերի 5-ին ժամը 16:00:

Բաց ընթացակարգում հաղթողը որոշվելու է՝

1) այն մասնակցին ընտրելու միջոցով, որի առաջարկած գնին եւ ոչ գնային չափանիշներին տրված գնահատականների հանրագումարը ամենաբարձրն է:

Մրցույթին մասնակցելու հրավերը հրապարակված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային WEB կայքում (www.cba.am): Մրցույթին մասնակցելու հրավերը, ինչպես նաեւ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Գործերի կառավարչություն, հեռ. 59-28-02,59-28-05 ներքին՝ 18-02, 18-05:

Բաց ընթացակարգին մասնակցելու հրավերի թղթային տարբերակը ստանալու համար ցանկացողները կարող են դիմել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ ք. Երեւան 0010, Վազգեն Սարգսյանի փողոց 6 հասցեով:

Սույն հայտարարության մեջ նշված բաց ընթացակարգի հետ կապված բողոքները կարող են ներկայացնել գնումների բողոքարկման խորհուրդ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

**ՀՀ կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայություն**

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 04 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան 18.7.2013, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: